Hon. Rédaction
Revue Arme... P.P.

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԱՄՈՒԼ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ եւ ՔԱՂԱՔԱԿԱՆ

25ՐԴ ՏԱՐԻ

1895

ԹԻՒ 5



ՄԱՓՏ

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՄՈՒԹ ՕՐԵՐ 129
ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ՊԷՏՔ Է ՊԱՏԺԵԼ ՄԱՆԿՏԻՆ (Պ. կեօլճիկլեան) 134
ԲՆՆԱԴԱՏԱԿԱՆ (Հերմիոնէ) 139
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԱՑԻ ՎԻՊԱՍԱՆՆԵՐ (Վ. Մ.) . 141
ՅՈՒԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ (Հ. Մ.) 148
ԽՄ ՅՈՒՇԱԳՐԵՐՍ (Մ. Մ.) 151
ՎԱԼՍԻ ԾԱՂՈՒՄԸ (Գ. Խ.) 158
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ 158
ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ 159

ԿԱՐԵՒՈՐ ԱՋԴ

Ա. ՄԱՄԼՈՑ *այն բաժանորդներն որ ցարդ անվճար թողած են իրենց նախորդ* (1894) *տարուան բաժնեգինն կ'հրաւիրուին վերջնապէս՝ իրենց պարտքն հատուցանել։*

Նոյնպէս կ'խնդրուի մեր հեռաւոր Ամերիկայ բաժանորդներէն որ հաճին իրենց ներկայ (1895) *տարուան բաժանորդագինն ուղարկել Խմբագրութեանս, Կանխիկ վճարելով մեր բաժանորդագրութեան պայմաններն։*

Ի դիւրութիւն մեր բաժանորդ այն, Թրքահպատակութիւնն կ'ընդունի տեղւոյն համ կ. Պոլսոյ վրայ փոխ—գիր և Օսմ. կամ այլ թղթատարութեանց թղթադրամ, արծ. մէճիտի մը վրայարէն հաշուելով 20 հատ դրուշնոց դրամ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԽԵ. ՏԱՐԻ

ԹԻՒ 5 1 ՄԱՐՏ 1895

ՄՈՒԹ ՕՐԵՐ

ԳԼՈՒԽ Ե.

ՁԵԱՆ ՀԱՒԱՏՈՒՄՆ

Մեր ապահովութեան համար վախուստի առաջին քայլն առնլէ եաւ՝ սկսայ անդամ մ'ևս քննել մեր վիճակն և կարեւոր որոշումներ ընել։ Նախ վորձեցի ուրուագրել թէ Սըր Մէրվին Ֆէրրանտի մահուան գալանիքն եթէ երևան դար ի՛նչ հետեւութիւններ կրնային ծագիլ։ Զանազի հանդարտօրէն սուգել թէ որ կողմէն կրնար հասնիլ ձայս դիւտին վտանգն և թէ ի՛նչ կերպով կարելի էր առաջն առնուլ կամ հեռացնել։ Անտարակոյս ամենէ աւելի վախ պղտոր անձն էր Տիկին Վիլսըն։ Նէ միայն դիտէր թէ այն մարդը նոյն իրիկուն Լիօտին հասնելու մտադիր էր։ Նէ միայն դիտէր թէ ինչ յարաբերութեան մէջ կը

դտնուէր այդ մարդը Վարսենիան հետ։ Ջիւնաբեր վոթորկին դիշերն իսկ սիտի նշանակուէր իրրև անոր մահուան ժամն, և ատոյգ էի որ երբ մի անգամ հաստատուէր թէ մեռնողն նոյն ինք Ֆէրրանտն է սիկին Վիլսոն սիտի փութար խորհիլ որ իր հիւրին յանկարծական մեկնումն և նէրա անմիջական հիւանդութիւնը վերաբերութիւն ունին ահաւելի դէպքին հետ։ Եթէ միանգամ դիտցածն կամ ենթադրածն յայտնէր, կասկածը սիտի ծանրանար բուն յանցապարտին վրայ և իսկոյն խուզարկութիւնը սիտի սկսէր։ Հոգիս կ'մորմոքէր մտածելով որ այս վտանգէն փախուստի ճար մը չկար։ Ապա՝ երկրորդական խընդիրներ այնքան չէին վրդովեր զիս։ Պաղ խորհրդածութեամբ կ'հետևցնէի որ իմ միամիտ Ուիլլըմս բնաւ երբէք ճշմարիտ եզրակացութեան մը չպիտի հասնէր։ Եթէ երբէք մեզմէ միոյն վրայ կասկածներ ունենար, անշուշտ Վարսենիկը չպիտի լինէր, և քանի դիտէի, թէ այնքան սերտիւ կապուած էր ինձ, որ եթէ անհրկիտ լինէր անգամ որ սև դործին հեղինակն ես եմ, նոյնպէս անհրկիտ պիտի լինէր որ բանաւոր պատճառներ ուենցած պիտի լինէի այդպիսի քայլ մ'առնելու և թէ իր լուսաչքը չրթերէն ջնաստակար բառ մը պիտի չելնէր ինձ դէմ։ Ոչ, բնաւ վախնալիք տեղի չունէի Ուիլլըմի կողմէ։

Անչափ մեղադրեցի ինքզինքս որ աղէտաբեր գինքն հետուն նետեցի։ Ինչո՞ւ չպահեցի և մղոններով խորունկ վայր մը չթաղեցի զայն։ Եթէ այդ հրայտնակը գտնուէր թերևս դատաստանքն գտնելու և ամեն բան երևան հանելու ծառայէր։ Իմ միակ յոյսս այս էր թէ այնպիսի տեղ մը նետեցի զայն որ տարիներով անյայտ սիտի մնար և սպաննութեան ոևէ յարակցութիւն անհետ սիտի անցնէր։ Վերջապէս՝ մտածեցի թէ, քանի որ սիկին Վիլսոն կարդ էր տալիք մանրամասն վկայութեամբն ամեն բան խանգարել, հարկ էր իմ առաջին դիտաւորութեան դառնալ։ Ցիմարարար դործուած սպաննութեան մը համար անտարակոյս իմ խեղճ Վարսենիկս պիտի ամբաստանուէր։ Ուստի՝ իր ազատութի միակ յոյսն — իրաւի, պէտք է ըսել, իմ ազատութի միակ յոյսս — անյապաղ փախուստն էր։ Կարևոր էր այնպիսի երկիր մը գտնալ ուր ձերբակալուելու երկիւղէ ազատ մնայինք։ Եւ ի՛նչ երկիր կար։ Կարծուածէն աւելի։ Ամեն տէրութեանց մէջ տակաւին արտաձգութեան դաշնագրերը կնքուած չէին։ Մանաւանդ Սպանիա ամենէ ապահով երկիրն էր և Անգլիա ընդ ունայն սիտի պահանջէր մեղապարտի մը յանձնումն։ Ուս-

ալ՝ որչեցի անյապաղ Սպանիա գնալ և մեր ուղևորութեան խորհուրդն հետևեալ օրն իմ մօրս հաղորդեցի. վստահ էի որ մայրս չպիտի մերժէր իմ խնդիրս, վասն զի կ'գիտէի որ Վարսենիկ չարած էր անոր իրրև մօր մը, քնական պաշտպանի մը։ Արդարև՝ իր սեռին յատուկ սէրը հնկան մ'երջանկութեան համար անհրաժեշտ է։ Վարսենիկ չատ աւելի մտերմութեամբ կ'խօսակցէր մօրս քան ինձ հետ, և քաջ գիտէի որ երբ իմ խնդրելիք միակ ցանկալի վարձատրութեան օրն հասնէր, իմ մօրս բարեսրտութիւնն այն ընկեցիկ և ամօթահար աղջկան համար իմ սիրոյս յետին ծայր նպաստաւոր պիտի լինէր։

Բայց միթէ երբէք պիտի չյաջողէի՞. միթէ այն սև դիշերուան գործին առջև պիտի դտնուէի՞նք երջանկութիւն։ Վա՛յ ինձ. սիրտս կ'ճմլուէր քանի կ'խորհէի որ անհնկալ օր մը կըրնար ինձ բերել ջախջախիչ հարուածն։ Ներելի չէր յապաղութիւն։ Այսուհետև պէտք չէ որ պատճառ մ'ունենամ իմ անդգուշութիւնս կամ անտոյգ ապահովութիւն մը պարսաւելու։ Շուտ, հարկ կր չուտով լոյս տալ վտանգէն։

— Մայր իմ — ըսի — կուզե՞ս ճամբորդել Վարսենկան և ինձ հետ։

— Ճամբորդե՞մ ես, Վասի՛լ, հազիւ վերադարձած եմ դրսէն։

— Ի՞նչ փոյթ. իսկոյն մեզ հետ եկուր։ Արի երթանք տեղ մ'ուր ջերմութիւն և պայծառ արև կայ։ Երթանք Սպանիա։

— Սպանի՛ա. ինչո՛ւ Սպանիա։ Բայց աստի՝ անշուշտ Վարսենիկ այդ ուղևորութիւնն ընելու վիճակին մէջ չգտնուիր։

— Ընդհակառակն. օգտակար պիտի լինի անոր։ Այս երկրին վրայ չատ ախուր յիշատակներ առած է։

— Լաւ, մէկ կամ երկու չաբաթէն տեսնեմ թէ ինչ կրնամ ընել։

— Ո՛չ, մայր, անմիջապէս։ Վաղն կամ միւս օր մեկնինք, մայր իմ, իրրև չնորհ կ'խնդրեմ այս։

— Գոնէ բանաւոր պատճառ մը տուր ինձ, Վասիլ, և վտանգդ պիտի կատարեմ։

— Մի անգամ նայէ երեսս, և պատճառը պիտի տեսնես։ Ձե՞ս տեսներ որ հիւանդ եմ, հալեր մաշեր եմ, ջլատ եմ։ Պէտք է որ օդ փոխեմ և չուտով փոխեմ։

Մայրս հոգատար աչքով ինձ նայեցաւ։

— Այո՛, դիտեմ որ հիւանդ ես, բայց ինչո՞ւ համար Սպանիա կուզես ուղևորիլ։

— Ըմա՛ք . . . հիւանդ մարդու մը քմայքը։ Վարսենիկան հօրը հայրենիքն է. թերևս այս է պատճառն որ կուզեմ Սպանիա գնալ։ Մայր իմ, խնդրեմ ըսէ ինձ, ինչպէս կ'գանես Վարսենիկն։

— Այն քու սիրած կինդ է. չատ գեղանի է. անգթօրէն վարուեր են իր հետ, նէ անբասիր է, կարճատև ծանօթութենէ մ'եառքն աւելի չեմ խօսիր որ ծայրայեղ չյինիմ։

— Սպանիա պիտի դաս ինձ հետ . . . Նէրա հետ։

Մայրս համբուրեց զիս և իմ քմածին այս խնդրոյս հաւանեցաւ։ Ասպա գացի Վարսենիկը գտնելու։

— Մայրս մեզ գուրս, տար երկիր պիտի տանի, ըսի Վարսենիկին ժպիտով մ'որ բանի էր, ինչպէս կին այժմ իմ բոլոր ժպիտներու։ — Նէ ամեն բան պիտի հոգայ քեզ համար։

— Գանի՛ բարեսիրտ . . . քանի անուշիկ կին է, մայրդ ըսաւ Վարսենիկ ծափ զարնելով։ — Վասիլ, մայրդ պաշտելու սկսայ։ Բայց ինչո՞ւ պիտի ճամբորդենք։

— Տխուր խորհուրդներէ հեռանալու համար. ահա պատճառ մը, երկրորդն այս է որ հիւանդ եմ։

Երկիւղալի ակնարկ մը նետեց ինձ այնպէս որ այտերս կարմրեցան։ — Ո՛հ, չուտ, իսկոյն ճամբայ ելլենք — գոչեց նէ։ — Հեռանանք այս սառնապատ երկրէն, և ես պիտի նայիմ քեզ, ես քեզ բոյժ պիտի տամ։ Ո՞ւր պիտի մեկնինք, երբ պիտի մեկնինք։

— Սպանիա . . . վաղը կամ միւս օր։

Այն առեն ինձ նայեցաւ այլայլուն նայուածով մը՝ զոր չատ անգամ դիտած կի։ — Վասիլ ըսաւ նէ — այդ ըրածդ ինձ համար է։

— Եւ ինձ համար, անշուշտ։

— Ես քու սէրդ մերժեցի . . . կեանքդ խանդարեցի։ Գեղ եկայ իբր ամօթապարտ կին մը։ Դու ազատեցի՛ր զիս։ Վասիլ, Աստուած միայն վարձատրէ քեզ. ես երբէք չեմ կարող։

Վարսենիկ յորդ արտասունք թափեց, արտորնօք սենեկէն դուրս ելաւ։

Շատ ազէկ ըրի ուղևորութեան խնդիրն իսկոյն որոշելով։ Նոյն կէսօրէն եառքն՝ հոլը վոխաւեցաւ և ձեան հալումն սկսաւ . . . հալում՝ որ ծանր այլ ստուգապէս պիտի բառնար այն թանձր սպիտակ քողն որ կ'ծածկէր բոլոր Անգլիան։

Նոյն դիշեր աչքս քուն չմտաւ։ Ձեի կարող ուրիշ բան մ'ը-

նել այլ արթուն մնալ և նկարագրել այն սպիտակ լիրիմն որ քիչ քիչ կ'հալէր, մինչև որ անոր ներքև գտնուած ճերմակ դէմքն երևան գար և ահարկու գաղտնիքն ամենուն ցոյց տար։ Ամենէ առաջ ո՞վ սպիտ գտնէր զայն։ Անտարակոյս գիւղացի մարդ մը կամ կին մը՝ որ այգուն այն ճամբէն սպիտ անցնէր։ Ամլա սկսայ աչքիս առջև բերել դիակը գտնողին սոսկումն . . . սարսափահար՝ աղաղակ մը պիտի արձակէր մին կամ միւսը։ Չէի համարձակեր դոցել աչերս, վասն զի գիտէի որ եթէ երազէի, իմ երազս սպիտ տանէր դիս ձեան կուտակին մօտ և սպիտ սպիտէր որ անոր հալիլը տեսնեմ։ Այնպէս կ'թուէր ինձ թէ մինչև որ վարսենիկ հալածուելու վտանգէն չհեռանար, կարելի չպիտի լինէր ինձ նորէն քնանալ։

Բանի որ սկսեր էր, այժմ ձեան հալումն հետզհետէ կ'աւելնար։ Տաք հով մ'և առատ անձրև մ'եկան միւս օր սրբելին ձիւնն։ Զմրան վերջին ճիգն էր, իրաւի, այն սակայն ձեան փոթորիկն։ Միրտս դողի մէջ էր թէ արդիօք ինչ պիտի տեսնէի առաւօտեան լրագիրներուն մէջ։ Վասն զի արդէն երեք օր անցեր էր և տակաւին Լոնտոն էինք։ Ուղևորութեան համար հազար տեսակ բաներ կային պատրաստելու։ Կարևոր էր անցագիր հանել։ Մայրս զանազան իրեր ունէր գնելու թէ Վարսենկան և թէ իրեն համար։ Կ'փափաքէր նէ հանդիսաւ ճամբորդել և չէր ուզեր շտապել։ Եւ ահա այս պատճառաւ տակաւին կը յապաղէինք, թէև անմիջական փախուստ մ'անհրաժեշտ էր։ Այս վտանգաւոր յապաղումն դիս աւելի ջլուտ, դիւրագրգիռ ընելով սրանեղուելիս աւելցուց իմ մտային այս վիճակս աննպաստ չէր իմ դատիս, քանի որ իմ չարժուձևերս և նպատաւածքս համընկնին լիովին իմ մայրս որ նոյն ուղևորութեան միակ չարժառիթն իմ առողջական վիճակս էր։

Այսպէս ընտիր կինն աւելի հոգ տարաւ որ ամեն բան շուտով պատրաստուի։

Հետևեալ օրն ճամբայ պիտի ելնէինք։ Կ'աղօթէի Աստուծոյ որ չատ ուշ չհնայինք, որ յաջորդ քսան չորս ժամն անփորձ անցնէինք, վասն զի գիտէի որ նոյն պահուն այն քաամնելի առարկան ճամբուն մի կողմն պատկած պիտի լինէր՝ արևուն լոյսն իր մահատիպ դէմքին վրայ։

Ակամայ բացի նոյն առաւօտեան մի թերթն և սիւնակներն արտորնօք աչքէ անցուցի։ Ի՞նչ փոյթս հին քաղաքական լուրերն, դրամական լուրերն։ Ահա այն պարբերութիւնն որ իմ

բոլոր ուշադրութիւնս գրաւեց։ Սպիտակ հիրիմն յայտներ էր իր գաղտնիքը։ Կարդա՛։ Այս բառերն ինձ համար հրեղէն տառերով գրուած էին։

«ՈՏԻՆԻ ՄՕՏ ԱՀՈՒԵԼԻ ԵՂԵՐ ՄԸ։ — Ջեան հալումն ըլլս բերաւ ինչ որ սովալի ոճիր մը կ'նկատուի։ Երէկ կէս օրէն ետք՝ հողագործ մ'որ մեծ պողոտային կ'անցնէր գտաւ ճամբուն մի կողմն երկնցած պարոնի մը մարմինը։ Հրացանակիր գնդակ մը պատճառած էր իր մահը։ Կ'կարծուի որ այս պատահած լինի ճիւնաբեր փոթորկին դիւերը։ Այս իրողութիւնները թէ՝ մահն յանկարծական եղած է, և թէ գէնք մը չէ գտնուած նոյն տեղն՝ կ'ջրեն ինքնասպանութեան կասկածը։ Դիակին վրայ գտնուած նամակներ ու թղթեր կ'հաստատեն որ նոյն ինք Մէրվին Ֆէրրանտն պատանին է։ Դժբաղդին բարեկամներուն արդէն կարևոր ծանօթութիւնները տրուեցան և հարցաքննութիւնը վաղը պիտի սկսի։»

(Շարունակելի)

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ՊԷՏՔ Է ՊԱՏԺԵԼ ՄԱՆԿՏԻՆ

Տեար Մանկասար Մանկասարեան, ճարտասան և իմաստասէր հրապարակախօսն, որ վերջին երեք տարիներու մէջ անկախօրէն կը քարոզէ Նիքակոյի մէջ ի լուր 3000-4000 ունկընդրաց, վերջերս իրեն նիւթ ընտրած է «Թէ ի՛նչպէս պէտք է պատժել մանուկները»։ Սարեւ կ'ամփոփենք իր խօսքերն։

Մանկասարեան կ'ըսէ։ Խիղճ ունեցող ծնողք կենաց մէջ աւելի բարձր նպատակ չեն կրնար ունենալ քան իրենց զաւակը ազատ պահել Մանկունք առիթ կ'ընծայեն մեզ ընելէ, զոր ինչ կը փափաքէինք մեր նախորդք ըրած լինէին մեզ։ Կենաց ճանդիրն անլուծելի պիտի մնայ մինչև որ սորվինք թէ ի՛նչպէս պարտինք կրթել ապագայի կինն ու մարդը։

Տունը կոչուած է մանրանկարն բարոյական իշխանութեան, յորում յառաջ կ'գայ կարգի ու կանոնի գաղափարն։ Կարգ և կանոն ծնած են իրաւանց գոյութենէն և հնազանդութենէն,

չէ կարելի կարգ կանոն հաստատել առանց օրինաց, և օրէնքն պարտի սրբացումն ունենալ, եթէ ոչ անպօր է։ Պատիժն նե-ղութիւն կ'արտադրէ, բոլորը պատիժք նեղիչ են, սակայն ցաւ և հաճոյք կենաց երկու կրթիչներն են։ Միայն հրահանգն բացա-սական է, այս է բնութեան մեթոտն։ Այն ձեռներն որք կը հո-դան, կը շինաեն նաև, ճայնն որ կերգէ, կը յանդիմանէ նաև։ Պզտիկ մանուկն պէտք է դիտնայ զոհող և զլացող մայրն։

Ոմանք ի մանկավարժից պատիժի դէմ առարկելով կրթու-թիւնն միակողմանի կ'ընեն։ Համարձակութեան բացակայու-թիւնն իրաւունք կուտայ պզտիկ տղուն դիմադրել իրաւանց, իսկ սիրոյ դադարիւն կը հաճեցնէ մանկտին հնազանդիլ։

Լօք՝ Անգղիացի փիլիսոփան՝ կը պնդէ թէ, յարդանքն է խարիսխ հնազանդութեան. յարգանք մը որ հպիւռ զանազանե-լի է վախէն, բայց կամաց կամաց ի սէր կը փոխի։ Ըստ Ֆէնելո-նի, հնազանդութեան խարիսխն իրաւունքն է. իրաւունք մը որ բնաւ տեղի չիտար, և ամենէ վերջ սէր և յարգանք կը չահի։ Ըստ Ռուսօի հնազանդութիւնն յարաբերութեանց դադարեցնէն կ'արտադրի։ Հերպէրթ Սփէնսըր իր « վարդապետութիւն բնա-կան հետևանաց » գրքին մէջ կը ջանայ ցոյց տալ թէ հնազան-դութեան հարկն ինքնին կը տալաորուի տղուն վրայ, որովհե-տեւ բնութիւնն յայտնի պատճառներու որոշ արդիւնքներն ցոյց կը տայ։ Նա կը հաւատայ թէ պէտք է տղան մեծցնել հա-ւասար աղատութեան վարդապետութեամբ, քան զի մարդ իրաւունք ունի ընել ինչ որ կ'ուզէ ընել պայմանաւ որ ուրի-չի մը իրաւանց չի դպչի։ Հաւասար աղատութեան վարդապե-տութեան մէջ կառավարուելու սկզբունքն կը դանէ։ Ձէ կա-րելի հասկնալ թէ, կրթութեան այս մեթոտն իր մէջ իրաւանց սկզբունքն կը պարունակէ, որովհետև եթէ ծնողք իրաւանց դործադրութենէն թուլնան տղայք. ալիտի դործածեն։ Մենք մեր տղայոց հետ հաւասարապէս չենք կրնար ապրիլ, զի եթէ անոնց հետ վարուինք իբր մեզ հաւասար անոնք պիտի նկատեն մեզ իրենցմէ ստորին։ Բնական հետևանաց վատահիլն երբեմն մեզ մոլորութեանց կը տանի։

Հարցնենք. բնութիւնն միշտ պիտի ուղղ՞. թէ արդեօք ուղ-ղութիւնն միշտ բարոյական պիտի ըլլա՞։ Փորձառութեամբ գի-տեմք թէ որ և է դործողութեան բնական հետևանքն այնչափ ուշ երևան կելնէ, որ հպիւռ կրնանք նախապէս եղած դործին վերադրել, երբեմն ալ այնչափ յանկարծ կուգայ որ ժամա-

նակ չի թողուր անդրադառնալու։ Կրնայ պատահիլ որ բնութիւնն իր ձեռաց մէջ առնէ մանուկն և պատիժն սահմանէն անցնելով վախի փոխուի, լինի պատառ տկարութեան և ախտերու, և լինի պատիժն յարատև, մինչ սխալն զոր գործեց մանուկն պատահական էր։ Օրինակի համար, տղան ծռած է պատուհանէն վար, բնութիւնն իր ձևն ունի՝ սովրեցնելու դորա վնասակարութիւնն, թէ ձգողութեան աշդեցութեան ներքև վար սլիտի իյնայ տղան, և մէկ բաղուկն կամ ոտքն կորնչուելով սովրի տղան թէ պատուհանէն դուրս կախուիլն վնասակար է։ Արդարև՝ ծնողայ բուն պաշտօնն է կանգնիլ մանկան և վտանգին մէջ Փիզիգապէս, ինչպէս նաև բարոյապէս մեր տղայոց ձեռքն թողլ տալու չենք որ նոքա ինքնին մղեն պաքսրընն։ Ծնողայ ազդեցութիւնն սկզբ է ի վերջաստ իրրև երկնային համար, իրր զօրաւոր գետին ընդ սաիւք և իրր հորիզօն չորս կողմն՝ ուրկէ չեն կրնար փախչիլ։

Տղայք զրգռուն են, մենք պէտք է խաղաղ լինինք, նոքա փոփոխամիտ են, մենք պէտք է հաստատամիտ լինինք, ծնողք նախախնամութեան պէս բան մը ըլլալու են, այս զրութեամբ է որ իւրաքանչիւր յաջորդող սերունդն կը լինի իմաստնագոյն քան զնախորդն։ Եթէ թողունք պի մանկտին սորվին իրենց փորձառութեամբ այն ատեն մէկ սերունդն միւսէն առաւելութիւն չպիտի ունենայ, անցելոյն փորձառութիւնն օգտակար չպիտի լինի անփորձ ներկային, որով իւրաքանչիւր սերունդ պարտի վայրենութեան առաջին սանդուխէն սկսի և վեր բարձրանայ։ Սակայն ասկէ չհետևիր թէ թոյլ տալու չէ մանկանց ազատ խաղալ և կամ առիւծի ձագի պէս վանդակի մէջ մեծցընելու ենք։ Տղայք պէտք է կռուին ապագային հետ, մենք պէտք է անցեալն յստակ ներկայացուենք։

Որպէս զի կրթութեան փորձն յաջողի երկու բան հասկընալ պէտք է, մանուկն և բնութեան մեթոտն։ Ամեն ինչ ի մանկան սկզբէն սկսելու է։ Ի՞նչու մանուկն կը ստէ։ Ո՞վ կը սովրեցընէ մանկան փոփոխիլ։ Բնութի՞ւնն, ո՛չ։ Մարդուն փիզիկական և բարոյական բնութեան մէջ տարբերութիւնն կայ, կրնամք մանկան մէկ մասին կամ աչքին վնասել առանց ողջ էութիւն զործելու բոլոր մարմնոյն վրայ։ Կրնայ մեր կատարայ փիզիկական զործողութիւնն տեղական լինիլ սակայն բարոյական զործողութիւնք տեղական չեն։ Բոլոր բարոյական տկարութիւնք զործարանական են, և ուսսի բարոյական կրթու-

թիւնն տեղական կամ ստհմանաւորիչ ընելու չէ. այլ ընդարձակ։ Արտէն պարտի սկսիլ՝ ուրկէ են կեանքի արտադրութիւնք։

Ի՞նչ կը նշանակէ պատժել — կը նշանակէ անհնազանդութիւնն ուղղել իր բնական հետեւանքին, այսինքն ցաւոց, պատժելու նշանակութիւնն է հասկցնել մանկան թէ չարութեանց արդիւնքն ցաւ և նեղութիւն է։ Մեր նպատակն պէտք չէ լինի ստիպել մանկան չիտակն ընել, այլ ջանալ սովրեցնել ու վարժեցնել, չիտակն ընելը սիրել։ Ձմեղ հաճեցնելու փափաքն չիտակն ընելու սկզբան հետ խառնելու չէ, և ուստի պատիժն մէկ ձեռօք նեղել է, միւսով քաջալերել է, ի կրից պատժելու չէ մանուկը, այլ ուղիղն ընելու սկզբան համեմատ, ստիպում չպիտի լինի այլ համոզումն։

Պատժոյ չարաչար գործածութիւնն աւելի վտանգաւոր է քան բոլորովին անհոգ թողուլն։ Պատիժն թոյն մ'է որ աւելի կարող և փափուկ ձեռաց մէջ կրնայ դեղ ու դարման լինիլ։

Ըստւի թէ, եթէ այն պատիժն որ մարմնոյն վրայ կը գործէ և վնասակար է, ուրիշ որ և է պատիժ ալ վնասակար է. օրինակի համար, դժպհի և խոժոռ նայուածքմը տղուն սիրտը պիտի կոտրէ և նշան պիտի թողու հոն, կը պնդեն թէ մտքին կամ սրտին վրայ ազդող պատիժք աւելի վնասակար են, աւելի լաւ չէ՞ մարմնոյն զարնել քան մտքին ու սրտին։ Մենք մարմինն և անոր վրայ եղած նշաններն կը տեսնենք, տղան կը կարմրի, կուլայ բայց մենք չենք տեսներ կապոյտ կամ կարմիր նշանն որ մեր բառերն կը թողուն տղուն սրտին վրայ, մենք չենք տեսներ այն ոչնչան հոսանքն որ տղուն սրտին մէջ կը վազէ։ Ոմանք կըսեն թէ մարմնոյն տրուած պատիժն օգտակար է, օգտակար խմելիքի մը նման արիւնն իշարժման կը դնէ յերակս կարթնցնէ ապուշ բնութիւնն, կընէ սիրտն արագ, կուտայ մանկան պատուոյ զգացումն։

Բայց մարմնոյ պատիժն մարմնոյն չերթար այլ մտքին կ'ազդէ։ Ապտակն միայն երեսին վրայ նշան չի ձգեր այլ մտքին մէջ է ուր խոցեր կը բինէ։ Մարմնոյն պատիժն միշտ մտքին պատիժ ըսել է, և երբ մտքին վրայ կը խօսինք մանուկն բնական էակ կ'առնենք։ Մարմնական պատիժն որպէս Հերպերթ Սբէնսըր կը ցուցընէ աշխարհի մանկութեան հետ սկսած է։ վայրենին է որ առանց պատճառի կ'զարնէ։ Մարմնական պատիժն դուն ուրեք կրնայ առանց բարկութեան լինել։ Երբ զրգռման նշան ցոյց կըտանք, սակարութիւն կ'արտայայտենք։

Օրէնք է որ պատիժն մանկան հոգեկան զգացման աստիճանին համեմատ ըլլայ, եթէ մանուկն աւելի զգայուն է, մարմնոյ պատիժն նուազ պէտք է լինի, պատիժն այնպէս լինելու է որ մանուկն չի կասկածի պատժոյ արդար կամ անարդար լինելուն վրայ, այլ պատիժն օգնելու է մանկան ինքնապատուհինքն դիտնալ, ինքնապատուհեան վրայ չինելու ենք այն հիմնարկութիւնն որ յաւիտեան ըլլայ։ Որովհետև օրօրանէն, կամ կեռած աւեղէն տղուն մտքին մէջ կրթեցուելու է մարդուն բնութեան բարձրութիւնն, Աստուածային լինելն, եթէ այս ընելէ թերանամք մեր մանկունք կորսուած են։

Կան նաև ուրիշ պատիժներ, որոնք աւելի վտանգաւոր են։ Փակել մանուկն մթին սենեակի մը մէջ ասով նորա երևակայութիւնն հեռաւոր և անտեսանելի իրերու կը ձգտին. մթութիւնն չար ընկեր է, պիտի զարհուրեցընէ զմանուկն։

Պատիժին բնութիւնն այնպէս ըլլալու է որ մանուկն զգայթէ ծնողք ևս կը նեղուին։ «Մեծ ցաւ ունիմ քու սրտիդ մէջ» ըսաւ քաղաքացի մայր մը իր աղջկան։ Տղան պէտք է դիտնայ թէ, ինք նեղուելով ուրիշներ ալ կը նեղէ, ասով պիտի զարգանայ ընկերական տարրն տղուն մէջ, ընտանեաց անդամներն ընկերութեան ամենամօտ անդամներն են, տղան ի տուն վարժուելու է ընկերական օրինաց։ Երկրորդ կարևոր կէտն է, մանկան սխալն ուղղել հակառակ առաքինութեամբ, այսինքն մտքի ղօրաւոր յատկութիւնք պարտին չեզոքացնել տկար կողմերն։ Ջօրութեան և տկարութեան մէջ եղած յարաբերութիւնք այնպէս չեն որ մին ղժիւսն պիտի ծածկէ, այլ մին ղժիւսն պիտի բարձրացուինէ նոյն մակարդակին վրայ։ Եթէ մանուկ մը ֆիզիքապէս զօրաւոր և բարոյապէս տկար է, թող ծնողք այդ բնութեանց երկու տեսարաններն ալ ի յայտ ածեն. մինչև որ ֆիզիքապէս զօրաւոր տղան ամչնայ իր բարոյական տկարութիւնն տեսնելով։ Տկար բնութեան սահմանն ցոյց տալով լայնցընելու է բարձրագոյն բնութիւնն։ Մեծագոյն և առաքինի խորհրդոց ներկայութենէն թող փախչին նեղ և նուաստ խորհուրդք։ Կրթութեան ամենաօգտակար ձևն է սխալն դատելու ճշմարտասէր ոգին արթնցընել տղուն մէջ։ Ոչ միայն հնազանդութիւնն և բարի լինելն իր պարտք ցուցընելու է, այլ անոնց դեղեցկութիւնն ի յայտ ածելու է։

23 Յունվար, 1895
Պօսթօն

ՊՏՏՐՈՍ ԱՒՕՒՃԵԿԼԵԱՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ՓՈՒՆՋ

ՕՐ· Վ· Տ· ԳԱԼՃԵԱՆԻ

Քննադատութիւնն գրական արտադրութեանց փորձաքարն ու քննասիրական ոգին ազատախոհութեան նշան ու յառաջադիմութեան պայման կարող ենք համարել։

Գրական դաշտին վրայ երևցած ամէն նոր երկ պէտք է որ քննադատական բովէն անցնի։ Անաչառ քննադատութիւնն ունի միշտ իր գերակշիռ նշանակութիւնն երբ փափկանկատութեան ու արժանապատուութեան սահմանէն չչեզոքը այն, կծու վիրաւորիչ ու նախատական լեզու մը է յայտ կ'բերէ զայն թելադրող դառափետիչ կամայականութիւնն ու խծբծաբեր ոգին։

Չեմ ընդունիր աչառու ըլլալ դրոշին ճնասելով գրականութեան, չեմ ընդունիր նոյնպէս խլուն իլալ գրոշի մը համար, անոր ղօհելով գրականութիւն, այլ կարելի չէ՞ միեմ կալան ըլլալ երկուքի նկատմամբ։

Օր· Վ· Տ· Գալճեանի փառէլ քննադատութիւնը տեսեր էի այն թերթի մէջ որ իւր առաջնորդող յօդուածին մէջ կ'ըսէր· — կիներու հզօր մասնակցութիւնն գրական կեանքին մեծ գործ մը պիտի տայ լեզուի զարգացման, բարգաւաճման, բարքերու բարեփոխութեան, գաղափարներու վերանորոգման հզօր միջոց պիտի ըլլան, փափաքինք ուրեմն ու աջակցինք կին գրոշներու թիւին չաճացու։» Այդ աջակցութիւնն ու քաջալերութիւնն չկրցի տեսնել այնպես որ եթէ Օր· Գալճեան տակոր կամքի տէր մէկն է, պիտի նետէ իւր գրիչն մէկդի ու պիտի զարգի միայն տան տնտեսութեան ու հաւքտութեան ընելով, կարծելով թէ այդ է միայն կնոջ ճակատագրային պաշտօնն ու առաքելք։ Պատահմամբ ձեռքս անցաւ Օր· Գալճեանի փառէն։ Ստուար գործ մ'որ կ'բազկանայ հարիւրէ աւելի ուսանաւոր բանաստեղծութիւններէ՝ որոց մէջ կան լաւերը, տկարներ, միջակներն ու թոյլերն։

Դիրքն ամրողջ կարդալէ յետոյ հետևեալ գաղափարն կ'կազմէ մարդ· թէ հեղինակուհին դեռատհասակ է, վասնզի մանկական մտածումներ շատ ու շատ են, թէ ընդարձակ գաղափար չունի և քիչ է ընթերցած, միայն իւր առաւար գործն ցոյց կ'տայ թէ ունի կամք ու աշխատասիրութիւն որ իւր ապագայի յառաջդիմութեան գրաւական կարող է ըլլալ։ Օր· Հիլդեգարտ կուհին փոխանակ իւր բոլոր գրած բանաստեղծութիւններն հրատարակելու թեան տալու, պէտք էր ընտրութիւն ընել ու փոխանակ ստուար գործ մը հրատարակ հանելու, փոքրիկ ու տաք գործ մը թող ըլլար այն, ուր՝ պատմանց աչքայմն ի հանդէս գար պատկան տողերու մէջ։

Տիկին Տօնէլեանի գրական համբաւն իւր Ա֊ւ֊ն քանաստեղծութիւնն միայն կարող էր չինել։

Փո֊ն է քննադատուած տողերէն թուկնոտը, Անօթութ Յիւսոյ մը, Ի֊ւ֊ կ֊ւեսուիմ, կը խոլիմ, Ողնոյնները, Ջ֊րը, Անթերագիր շատ յոռի քանաստեղծութիւնք են, նաև Աչերը, Աւտո֊, Կ'ուրանամ, Բոլերը, Ապրուած էմ, Մ֊ոյր, Բոլերը, Գիմ, Բռո֊նը, Ալյա, Գլուխ տուր, Ջերմանի երկի, Փութիր Մեղ֊ որոց մէջ սխալ մտածումներ, անտաշ ճաշակ ու անհմաստ տողեր շատ կան։

Իսկ հետևողութեամբ գրած տողերն լաւ են. Սէրս պետն Ա֊ուսած և այլն, Դպրոցականները և այլն, ընդհանուր գործին մէջ լաւագոյնների որոց մէջ կան նաև դեղեցիկներ՝ հետևեալներն են. Ընթերը, կիր, Հմբաւոր, Ծուխ էն ելին, Անեծ, փոխեր, վէրպոյն, Դ֊ն֊ւ, Վ֊րը, կողերը, Մ֊ը, Աչքե, երբ ջ֊ւն, երբ պոպիկն, Մ֊րը, Ա֊ լ֊ն, Ա֊ Մ֊նչ֊ւ, Ա֊ Ծնեցնիլ, Ա֊ Հուլիլ, Երբ֊նիլ ժամն կ'իջայ֊, վ֊նէ, Դիվեցիկ, Ողջոյն ղ֊ւեր։ Հեղինակուհիին ծնողսեր ոգին իւր մի շատ տաղերու մէջ կ'տեսնուի, իւր մէջ տիրող գգացումն է որդիական սէրն։

Մ֊ոյր վէ֊ տաղին մէջ շատ անբնական է մնհամերձ սիրահարի մը ուղղած խօսքն առ իւր սիրելին — չեմ ուզեր որ սիրող այրի, քիչ առեղն մնաս այրի — թէ՝ դու համակ գեղու ընորհ ես և քանիներ պիտ յաբրին քեզ։

Հիւանդ սիրահարին հագեկան վիճակն լաւ չէ վերլուծուած ու այդ ղսբմանալի չէ իրեն համար։

Անբնական են նմանապես իմ ուրբ, Մնաց բարեաց, իսկ Սէրն ու Սէր֊ն լաւ է, բայց չհամապատասխաներ վերնագրին։

Կատարեալ քանաստեղծ ըլլալու համար պետք է զգալ խորապես գգացումներն են որ խանդ ու աւիւն պիտի ներշնչեն քանաստեղծին ու վառուն անոր երևակայութիւնն։ Այդ ամենն պիտի գան անշուշտ տարիներու հետ՝ նորագոյն զգացմանց լարեր թրթռացնելով հեղինակուհիին սրտին մէջ։ Ժամանակն ու աշխատութիւնն պիտի իրականացնէ անշուշտ այն աւելն գեղեցիկ յոյսերն որ ունինք հեղինակուհիին համար։

Վիշտ, ցաւ, սէր, վերին հրճուանք չէ ունեցած դեռ, ուստի ինչպէս կարող ենք խոստպահանջ ըլլալ իրեն նկատմամբ։ Կը հնայ մեզ ընորհաւորել զինք իւր գեղեցիկ տաղերուն համար ու մաղթել որ երբեք չվհատի այլ ջանայ ինքնօգնութեամբ յառաջանալ ու օրինակ տալ մեր մի շատ հայուհիներու որք կ'վարանն անհպատակ կեանք մը, երբ ասդին ունինք այնքան բազմադիմի պիտոյք որոց գոնե մի մասն կարող է ընուլ հայ իգական սեռն։

Օ՛ն, հայուհիք, ընտրեցեք ձեզ համար մի բան, գրականութիւնն մրցման ասպարեզ թող լինի ձեզ համար։

Քաջալերուեցեք և դուք Օր֊ գալշեան ու պատրաստեցեք մեզ համար նորագոյն ու գեղեցիկ փունջ մը։

ՀԱՐՄՈՒՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԱՅԻ ՎԻՊԱՍԱՆՆԵՐ

Ֆրանսական դրականութիւնը հարստութեան կողմէ ո և է երկրի դրականութենէ դերազանց է։ Իրաւ՝ թէև Ֆրանսա հոյներս մը, Շէյքսպիր մը կամ Տանդէ մը չէ արտադրած, բայց Ռասինէ և Մոլիէր այնպիսի յաջորդներ թողած են որոց վիպականները և թատերգներն անբաղդատելի են թէ ոճի ղեղեցկութեան և թէ ընորհալի հիւսուածքի մասին։

Ներկայ Ֆրանսական վիպասանութիւնը այս դարուս սկիզբէն սկսաւ, թէև նախորդին մէջ կը Սաժի, Վոլթեռի, Ապէ Բրէվոի, Տիտրօի և Ռուսօի կողմէ յայոդ հոլմեր եղան վիպական արուեստին մէջ։ Սակայն Ուօլթըը Սքօթի, ներկայ վիպասանութեան հնարիչն, Անգլիոյ մէջ ունեցած մեծ յաջողութեանց վրայ էր որ, Ֆրանսայի մէջ արձակ վիպասանութիւնն ուշադրութիւն դրաւեց։ Այն առեն, հապիւ տաս տարուան մէջ, Վիքթօր Հիւկօի, Թէօֆիլ Կոթիէյի, Ալեքսանդր Տիւմայի, Ժօժէն Սիւի, Պալզաքի, Ժիւլ Սանտօի, Ժօրժ Սանտի, Բօլ ար Քօքի, Բրօսքէր Մէրիմէէի նման կարգ մը վիպասաններ երևան ելան, որոց հակակշռեն չգտնուիր դրականութեան պատմութեան մէջ։ Այս երեսուն տարի անցնելով՝ նոր սերունդ մը հասաւ — Մուրժէ, Ասլու, Ֆէօյէ, Ֆլօպէր, Կապօրիօ և Էմիան Շարդրիան, որ այժմ մեռած են։ Ներկայ առաջնակարգ Ֆրանսացի վիպասաններն Պալզաքի և Ֆլօպէրի սկզբանց հաւատարիմ են, և կարծես թէ կ'ջանան իրենց նախորդները դերազանցել իրապաշտական և հոգեբանական վերլուծութեանց մէջ։ Ասոնց մէջ առաջին տեղ մը կ'բռնեն Էմիլ Զոլա, Ալֆոնս Տօտէ և Բօլ Պուրժէ։

Էմիլ Զոլա, որու գործերն թերևս աւելի ծանօթ են քան ուրիշ ո և է Ֆրանսացի հիշինակի մը գործերն, ծնած է Բարիզ 1840 ին։ Իր հայրը Ֆրանսուա Զոլա, իտալական սերունդէ, արհեստով ճարտարապետ մ'էր։ Վիպասանին երիտասարդութիւնը Ֆրանսայի հարաւային կողմը անցած էր, բայց վերջն Բարիզ գնաց և ուսումը Ս. Լուիի վարժարանի մէջ առաւ։ Տասնութ տարեկան էր երբ Հաչէդի երևելի դրատան մէջ մըտաւ իբր գործակատար։ Իր բոլոր պարապոյ ժամերը դրակա-

նուիրեամբ կ'անցնէր և կ'ձգնէր մամլոյ մէջ տեղ մը գրաւել, Էվէնման անուն թերթին ստիպ գրելով։ Թէև օրագրութեան մէջ անդուլ կ'աշխատէր բայց առաջին անգամ Զօլա իր վիպասան հռչակ հանեց։

Ի սկզբան շատ մը վէպեր ընելէ վերջ, 1864ին հրատարակած քանի մը զրոյցներու հաւաքածոյ մը Բոնփ ու Նէնէն (վիպակը առ Նինոն) անուամբ լաւ ընդունելութիւն գտաւ։ Այս երկին յաջորդեց 1865ին Լա Բընֆէյէն ըը Բլօ (Բլօտի խոստովանանքը) անուն հոգերանական վիպակը որու մէջ հեղինակին իրապաշտական ձգտումներն կ'նշմարուէին։ Ապա 1867ին լոյս տեսաւ Թերէզ Ռաֆէն, կորովի պատկեր մը խզճի խայթի կսկծալի և խօլական տանջանաց, և տարի մը յետոյ Մադլէն Ֆէբռ, ժառանգական ազդեցութեան ուսումնասիրութիւն մը։ Վստահ իր բնատուր կարողութեանց վրայ՝ Զօլա Պալզաքի Մարդկային Կատակերգութեան ծրագրին վրայ հիմնեալ հսկայական գործի մը ձեռնարկեց։ Ուսկոն Մաքառ ընդհանուր մակագրով սկսաւ շարք մը վէպեր հեղինակել իւրաքանչիւրն յարաբերութիւն ունենալով յաջորդին մի և նոյն նկարագիրներու յայտնութեամբ, և Ռուկոն Մաքառ երրորդ կայսրութեան ժամանակի բնական և ընկերական պատմութիւնն է։ Այս ծրագիրն քսանամեայ աշխատութեան արդիւնքն է։ Առաջին հատորներէն մին էր Լա Բիւբէ (կերուխուտ) 1860–1870 Բարիզեան բարձր կարգի անկարգ կենաց նկարագրութիւնը՝ որ կառավարութեան կողմէ արդիլուեցաւ։ Ապա նուազ նշանաւոր գործերէ վերջ՝ հրապարակ եկաւ Լ'Ասոմոար (Լախդը) Զօլայի ամենէ յաջող գործերէն մին, և թերևս իր գլուխ գործոցը, նման՝ որ ծանուցուեցաւ իբրև միակ մինչև ցարդ գրուած երկերուն մէջ յանգգնութեան կողմէ։ Բօ Պոյէ, Փրանսացւոց միջին կարգի բարուց քմահին ուսումնասիրութիւն մը։ Ժէրմինալ, մուրոզութեան թշուառ վիճակին վրայ վարպետ նկարագիր մը։ Լաբէօ (երկիր) որ Փրանսայի գեղացւոյն կեանքը կ'ներկայէ իր ամենէ կոշտ իրականութեամբ։ Լը Ռեվ (երազն) որ հակապատկեր մ'է իր հովուական շնորհով իր նախորդ գործերուն հետ։ Լ'Աբժան (դրամը) երկրորդ կայսրութեան ելմտական դայթակղութեանց վրայ վէպ մը։ Լա Տեզթէլը, (քայքայումը) Ֆրանքօ-Գերման պատերազմին աքանչելի պատկեր մը, և ի վերջէ Տոք։ Բռուէլ, որ այս շարքին աւարտն է։ Զօլայի վերջին վէպը Լ'Էբը՝ հրաշալի պատկեր մ'է նոյնանուն ուխտատեղիին, և հիմակ ուրիշ գոր-

ծով մը կ'զբաղի, որով պիտի նկարագրէ Հոմ։ Այնուհետև պիտի սկսի Բաբելոնեան դիրքը։

Իր աննման յաջողութեան հակառակ Զօլա շատ հարուստ չէ։ Հարստութեան աչք չունի, և ինչ որ չահի կ'վատնէ։ Սակայն շատ աղտոտ տուն մ'ունի ի Բարիզ և ի Մէտան գիւղական ըզբօսեակ մը որ միջնադարեան ոճով կահաւորուած և զարդարուած է և մաս առ մաս չինուած է իր վէպերէն չահած գումարներով։ Իր տարեկան եկամուտը հարիւր հազար ֆրանքէ աւելի չէ։ Տարին իր վէպերէն կ'ծախէ ութսուն հազար օրինակ և մէն մի օրինակէն կ'ընդունի տասն երկու սու, իսկ օտար լեզուով թարգմանուածներէն նոյնչափ կ'ստանայ։

Զօլայի մեծագոյն փառասիրութիւնն է անդամակցիլ Ֆրանսական Ակադեմիային, քանիցս ներկայացուցած է ինք զինքը իբրև ընտրելի, այլ առանց յաջողութեան։ Նա կ'յայտարարէ թէ ամեն անգամ որ աթոռ մը թափուր մնայ պիտի ներկայանայ իբր ընտրելի մինչև որ յաջողի, կամ մինչև իր մահը։ Կը յայտարարէ թէ այս յամառութիւն չէ՛ իր կողմէ, այլ կ'պնդէ թէ քանի որ Ակադեմիա մը կայ իր գործերը իրեն իրաւունք կտան անոր անդամակից լինելու։

Ալֆոնս Տօտէ ուրիշ Ֆրանսացի երևելի վիպասան մ'է որ երբէք ակադեմիական կանաչ վերարկուն չպիտի հագնի։

Իր առաջին յաջողութիւնները գտաւ թատերաբեմին վրայ։ Բայց իր համբաւը իբր վիպասան սկսաւ Ֆրոման Ժէօն է Ոչ Էնէ անուն վէպովը, գործ մը որ Ակադեմիայի կողմէ մրցանակի արժանի դատուեցաւ 1873 ին։ Իր երևելի գործն է Լէդ Ալֆոնսէոր Մերվեյլեօզ պը Թարթարէն պը Թարասկոն որ նախ ուշադրութիւն չդրաւեց բայց վերջը իր գործոցը կարևորագոյնը սեպուեցաւ։ իր վերջին գործերուն մէջ երևելիներն են, Նոմա Ռոմէսքան, Աֆթ, (1884)։ Բարիզեան բարուց ուսումնասիրութիւն մը և Լ'Իմորթել (անմահն) (1888) Ակադեմիայի վրայ երգիծաբանութիւն մը։

Ալֆոնս Տօտէ և Էմիլ Զօլա անկասկած ներկայ դարուս Ֆրանսայի ամենէ մեծ վիպասանները կ'համարուին։ Զօլա թերևս Տօտէէ աւելի զօրեղ գրիչ մ'ունի բայց Տօտէ Զօլան կ'գերազանցէ թէ ոճի վայելչութեան և փայլուն, և թէ բանաստեղծական տաղանդի կողմէ, որմէ Զօլա բոլորովին զուրկ է։

Թէև Բօլ Պուրժէ ներկայ Ֆրանսացի նոր վիպասաններու ամենաուժգնն է տարիքով, բայց տաղանդի կողմէ միւսներէ վար

չՇնար։ Թէ իր նախորդներուն և թէ իր ժամանակակիցներու մէջ, Բօլ Պուրժէ առաջինն է որ վէպերու մէջ հոգեբանական քննութիւնները ամենէ շատ յառաջ տարած և մարդկային սրտի և կրից ուսումնասիրութիւնները դիտութեան մը վերածած է։ Իր Մանուէլ (ուսուցը) անուն վէպը բարիզեան բարքի լաւագոյնն է իր գործերուն մէջ։ Իր վերջին վէպերուն մէջ ամենէ երևելիներն են Թերևս, Բրէ-Եվ Էնիկմ. (անգութ հանելուկ) և Փոլճեօլէօ (աչխարհաքաղաքացի)։

Դարուս ֆրանսական երևելի վէպերէն մին է Լա Տամ Քոմէլիէ՝ որ իրր թատերգութիւն ևս մեծ յաջողութիւն ունեցած է։ Այս վէպին հեղինակը Ալեքսանդր Տիւմա որդի, հիմակ տարեօք եօթանասունէ աւելի է, բայց բարիզեան գրականութեան մէջ կարևորագոյն և գործօն դէմքերէն մին է։ Իր երիտասարդութեան ժամանակ Տիւմա որդի չատ չէր ախորժեր վիպական գրականութենէ, որու մէջ իր հայրը այնքան անուանի եղած էր, և որով ինքն նոր ճամբայ մը բացաւ։ Տիւմա հայր երկար ժամանակ չէր հաւատար թէ իր որդին գրագէտ մը պիտի լինի։

Կ'ըսուի թէ երբ որդին հօրը կարդաց Լա Տամ Քամէլիէյի ձեռագիրը հայրը ուրախութեան արցունքներ թափեց և յայտարարեց թէ անոր հեղինակը աւելի մեծ գործեր պիտի ընէ քան հայրը, մարդարէութիւն մը որ իրօք կատարուեցաւ։ Այս երկու վիպասաններու գործերը եթէ բաղդատուի կ'տեսնուի թէ որդին հօրմէն աւելի դիտող միտք, աւելի խորունկ մտածումներ և աւելի սահուն ոճ մ'ունի։

Ձորս հինգ տարի առաջ բոլոր Բարիզ Մոթամ Բրէոնանէէի և անոր նորատի հեղինակին Բիէր Լօդիի վրայ կ'խօսէր։ Իր անունը անգ աւելի քիչ կ'յիշատակուի, բայց ինք յաջողած է Ակադեմիոյ մէջ աթոռ մ'ունենալու և իրեն գործերը պիտի տևեն լեզուին հետ իրրև ինքնատիպ, կորովի և շնորհալի գործեր։

Բիէր Լօդի գրական անունն է Լուի Մարի Ժիւլիէն Վիօի, ֆրանսական նաւատորմին սպայ մը, ծնած է ի Ռոշֆոր հին բուրգական ընտանիքէ մը, և տասն եօթ տարեկան հասակին մէջ նաւաստի եղած և բոլոր աչխարհ պտըտած է, Թոնքինի պատերազմի ժամանակ լրագրական անխոհեմութիւն մը իր նաւաստիի ապագան վտանգեց։ Ֆիկարօի դրկեց նկարագիր մը ֆրանսական զինուորներու անզգուշութեան Հիւէի աւերման ժամա-

մանակ և անմիջապէս պաշտօնանկ եղաւ։ Տարի մը ետքը սա-
կայն իր նաւային պաշտօնը ստացաւ։ Իր զրական ստանուն
առաւ դպրոցի մէջ իրեն տրուած մականունէն՝ մը։ Իրրև տղայ
չատ երկչոտ էր և իր ընկերները զինքը Լօղի կ'կոչէին հեգնո-
րէն հնդկական փոքրիկ ծաղկի մը անունը, որ իր դէմքը խա-
տին տակ կ'պահէ։ Այս ստանուամբ է որ վիպասանն Ակադեմի-
այի անդամ ընտրուեցաւ 1891 ին։ Օքդավ Ֆէօյլէի մահուամբ
թափուր մնացած աթոռը բազմելու համար։ Լօղի զսրմանալի
նկարագրական կարողութիւն ունի, թէև իր գործերը քիչ մը
միօրինակ են և գրեթէ ամեն վէպի մէջ զրագէտին անձը մեծ
տեղ մը կ'բռնէ։

Ոչ նուազ երևելի է Փաղիւլ Մանտէս, որ ծնած է Պօրտօ
1844ին բօրթուգալցի ծնողքէ։ Փոքր հասակին մէջ Բարիզ գնաց
և հազիւ տասն ուրթ տարեկան էր երբ Լա Ըզէթ-Տ'Ընդէգ ա-
նունով թերթի մը սկսաւ հրատարակել։ Առաջին թիւին մէջ իր
մէկ ոտանաւորը կար, որ մեծ գայթակղութիւն պատճառեց և
հեղինակը տուգանքի և բանտարկութեան դատապարտուեցաւ։
Այս դէպքը բաւական եղաւ Մանտէսը անուանի ընելու։ 1886
ին Փիւտիթ Կօթիէի հետ ամուսնացաւ՝ Մարմաղէլ որ Մօբէնէ
անմահ հեղինակին աղջիկը, ինքն ևս նշանաւոր զրագիտուհի
մը, բայց ամուսնութիւնը երջանիկ չեղաւ և չատ չանցաւ իրար-
մէ բաժնուեցան։ Իր երևելի գործերն են. Լը Ռոա Վէնբօ, Զօ'
Հոր, Լա Բըզիէր Մէրըէ, Լա Ֆամ Անֆոն, Լա Կրանտ Մակ և Լա
Մէղէն որ Լա Վէնէյլ, իր վերջին և թերևս լաւագոյն գործը։ Նաև
չատ մը վէպիկներ գրած է բարիզեան թերթերուն մէջ և բա-
ւական թուով թատերգներ։ Իր գործերէն չատերը անթարգ-
մանելի են և նոյն իսկ քանի մը հատին դարձուածքները անը-
կարագրելի, թէև իր համբաւը լոկ տուփաբանութեան վրայ չէ
հաստատուած։ Մանտէս սքանչելի վիպասան մը և ճշմարիտ քը-
նարերգակ բանաստեղծ մ'է և իր հրապուրիչ ու գեղեցկահիւս
ոճը, իր վէպերուն համաձայնաձոսութիւնները մոռցնել կու-
տայ։

Արման Սիլվէսթրը, Ռապլէի դպրոցին հետևող ուրիշ յեղ-
յեղուկ հեղինակ մ'է։ Շատ մը վէպերէ զատ՝ քանի մը հատոր
քերթուածներ ունի և յաճախ վիպակներ կ'պրէ Փրանսական
թերթերու մէջ։ Թատերգութիւնները ալ գրած է, որ բաւական
յաջողութիւն գտած են։

Ֆրանսական գրական աշխարհի մէջ եզական յաջողութիւն մը ունեցած է Ժօրժ Օնէ Լը Մերրը ու Ֆէրժի (դարբնոցապետը) յաջողակ հեղինակը։ Բոլոր հրատարակիչները մերժած էին Օնէի վէպերը, երբ իր մէկ բարեկամը՝ Ալբահամ Տրէյֆիւս անուն, աղաչեց հրատարակչի մը որ Օնէի գործերէն մին հրատարակէ։ Սէրժ Բոնին տպուեցաւ, աննման յաջողութիւն մ'ունեցաւ և Ակադեմիոյ կողմէ մրցանակի արժանի դատուեցաւ, բարդրագոյն պատիւ մ'որու Ֆրանսացի հեղինակ մը կրնայ բաղձալ։ Թէեւս Օնէի գործերը գրական տեսակէտով այնքան բարձր չեն, թէև իր ոճը իր ժամանակակիցց և նուաղ կարդացուած մի քանի գրագէտներու ոճին հետ չզուգադիպիր, բայց հնարագիտութեան և պատմութիւն մը հիանալի կերպով պատմելու աննման ձիրքն ունի, ինչ որ իր յաջողութեան գաղտնիքն է։

Ֆրանսուա Քօբբէ, Ֆրանսայի երևելի բանաստեղծը, ոչ միայն սքանչելի ոտանաւորներու հեղինակն է, այլ և գեղեցիկ վիպակներ և շատ մը թատերգութիւններ գրած է, որոց մէջ Լը Բոսան՝ (անցորդը) միաբար փոքրիկ կտոր մը Սարա Պէրնարի հանճարին ուշադրութիւնը գրաւեց։

Ամեն ազգի միլիոնաւոր տղոց սրտերն հմայող գրագէտն է Ժիւլ Վէրն, Բոան հազար ֆռանքի թոշնելու գոկ և Աղետարհիս ղբնաւ ուղեւոր էրուան մէջ, անուն զուարճալի և հրահանգիչ պատմութեանց հեղինակը։ Ժիւլ Վէրն ծնած է Նանթի մէջ 1828 ին, գրական ասպարէզը մտած է իբր թատերագիր, բայց 1863 ին էր որ իր գրած առաջին պատմութիւնը հրատարակչին յանձնեց։ Այս գրքին մէջ՝ Հինգ շաբաթ օդապարիկով, վէպն կ'խօսէր գիտական նորագոյն գիւտերու վրայ, պատմագրական զուարճալի ոճով։ Յաջողութիւնը նորանշան էր, և բաղդաւոր հեղինակը դեռ կ'չարունակէ նոյնօրինակ ժողովրդային վէպեր յօրինել։

Ուրիշ գիտուն մ'ալ, Քամիլ Ֆլամարիօն բաւական յաջողութեամբ գիտական վէպեր գրած է։ Ինք կղերական կրթութիւն մ'առած և կրօնաւոր լինելու սահմանուած էր, բայց իր գաղափարները կրօնական կոչման հետ չկրնալով հաշտեցնել, փոխանակ եկեղեցականի աստղաբաշխ եղաւ։ Անուանի եղած է աստղաբաշխական ուսումը ժողովրդականացնելով և Վէրնի նման իր վէպերուն մէջ աստղաբաշխական իրողութիւններ մուծանելով։

Ֆրանսացիք սրամիտ են, այլ ոչ զուարթաբան, (humorous) Մաքս Օ՛ Րհլ (Ռօլ Պլուէ) բացառութիւն մը կ՛կազմէ, և հեղինակն է շատ մը զուարճալի գրքերու, ինչպէս Ճէն Պոլ Էնդ Հէլ Այլընդ (Անգլիա և իր կղզին), Ճծնոֆան Էնդ Հէլ Ֆրէնչ (Ամերիկա և իր երկիրը)։ Պ. Պլուէ դեռ քանի մը տարի առաջ Լօնտոնի թաղային դպրոցի մը վրանսերէն լեզուի դասատուն էր, այս պաշտօնին մէջ եղած ատեն Անգլիոյ ժողովրդեան բարուց և սովորութեանց վրայ նամակներ կ՛գրէ իր մէկ բարեկամին։ Նամակները այնքան կ՛հաւնուին որ գինքը կ՛խրատեն որ գրքի ձեւով հրատարակէ։ Առանց մեծ ակնկալութեան խելոյն կ՛զործադրէ անոնց վաճառքը և գիրքը աննման յաջողութիւն մը կ՛գտնէ։ Թէև Մաքս Օ՛ Րհլ խորաթափանց գրագէտ մը չէ բայց իր գրքերը իրենց տեսակին մէջ ընտիր են։

Ֆրանսայի վիպասաններու չարքին մէջ մոռնալ պէտք չէ նաև Մարթհլի կոմսուհին, որ ծէծ գրական անուան տակ կ՛գրէ։ Իր ընտանեկան անունը Միրապօ է՝ ինք երեւելի քաղաքագէտ-առեներաքանին սերունդէն լինելով։ Իր գրական առաջին քայլը պարզ դիպուածով մը սկսաւ։ Որսորդական արշաւի մը ներկայ գտնուելով նկարագրեց զայն և անանուն՝ վէ Բոլիէնի անուն թերթին ղրկեց։ Խմբագիրը հաւնեցաւ գրուածին և ժրի ո՛վ լինելը հասկնալով՝ խնդրեց իրմէ որ ուրիշ յօդուածներ ալ ղրկէ։ Վերջ մը ետք կոմսուհին Ըղէ Պօղ անունով ծիծաղելի լինելու չափ զուարճաղուզ պատմութիւնը գրեց, որ ամիսներով բոլոր Բարիզ զուարճացուց։

Տիկին Ատամ (Ժիւլիէդ Լամպէր) Նո՛վել Ըղէ՛ անուն գրական և քաղաքական երեւելի թերթին խմբագրուհին է, և ամեն մէկ թերթի մէջ իր կողմէ քաղաքական յօդուած մը կը գրէ։ Իր խմբագիր՝ յետին ծայր հմուտ է և կորովի ու իմաստալից ոճ մ՛ունի։ Նաև շատ մը վէպեր գրած է՝ միշտ մարդկային զգացմանց ազնուադոյնները նկարագրելով։

Ֆրանսական արդի գրականութեան մէջ լաւ տեղ մը կ՛բռնեն նաև հետեւեալ վիպասանները. Անարէ Թէրիէ, Մարսէլ Բրէվօ, Լիւսիէնի Հալեվի, Հէնրի Լավըտան, Ժիւլ Քլարթի, Տանիէլ Լըմիէօր և Ժիւլ Լիմըթէն, որոց անունները միայն կ՛յիշենք տեղւոյս անձկութեան պատճառաւ,

Բ-ԷՅ Վ. Մ.

ՅՈՌԻ ՍՈՎՈՐՈՒՔԻՒՆ ՄԸ

Ա. Մ-ն ներկայ չըլլանի Ա.-ին թիւին մէջ՝ Գ. Մ. Նու-պարեան դիտողութիւն ըրած էր քաղքիս քահանայից դասուն, մատնիչ ընելով յուղարկաւորութեանց առ-թիւ անոնց դանդաղութիւնն որով որոշեալ ժամանակին ներկայ չեն գտնուիր յուղարկաւոր տունն։

Ցուսալի է, որ քահանայից դասն ճանաչելով իր դան-յատուութիւնն աւելի փութկոտութիւն պիտի ցոյց տայ, անթերի կատարելու այս մասին իր պաշտօնը։

Բայց մինչ Մ. Նուպարեանի նշանակած ջեղ-ոն դատ՝ նոյն իսկ հակառակ կրօնի և եկեղեցական պատ-կառելի պաշտամանց, չէ՞ դիտուած ալ աւելի, չգիտենք ինչպէս անուանել, դայթակղելի և յոռի սովորութիւն մ'եւս։

Ինչուշտ՝ զարմացմամբ պիտի հետաքրքրուի լսանալ աշխ. ընթերցողն, թէ մեր եկեղեցական ուրիշ ո՞ր տե-սակ պակասութեանց վրայ պիտի դառնայ մեր խօսքն, քանի որ այլազան են անոնք, թէև պարտ է ըսել որ այս պակասութեանց, անմատոյց քահանաները կ'դանուին, իբրև բացառութիւններ, դի ամեն տեղ և ամեն բանի մէջ բացառութիւններ կան և կ'մնան։

Մեր ընելիք դիտողութեան, ցոր անտարակոյս հատա-րակութեան դլեխէ բոլոր ողջախոհ մասն, մանաւանդ ի-դական սեռն, որ այս պարագային մէջ ամենէ աւելի նե-ղութիւն կ'կրէ, բոլոր սրտէ ձայնակից պիտի լինին։

* * *

Ամեն ժամանակ, թէ լաւ և թէ տէրունական օրեր, սովորութիւն է եկեղեցւոյ մէջ պնակ և դանձանակ դարձնելն, որպէս զի բարեպաշտ քրիստոնեայ հայք ի-բենց սրտաբուխ լումայն նետեն անոնց մէջ, մերթ եկե-

ղեցւոյ, մերթ տնանկաց, մերթ պատարագիչ քահանայի, մերթ լուսարարի և քահանայից և այլոց ի նպաստ։

Տէրունական և կիրակի օրերն մանաւանդ երբ արք և կանայք կ՚դիմեն եկեղեցի, մինչ պատարագիչ քահանան Ս. խորանին առջև իր ձայնն կ՚բարձրացնէ առ Աստուած և կ՚հրաւիրէ բարեպաշտ ժողովուրդն աղօթել, կամ երբ Ս. Աւաջնորդն կ՚ակսի իր քարոզն, կամ երբ դպիրք կ՚երգեն միաձայն, կամ երբ քահանան կ՚բանայ Աւետարանն, ահա կ՚սկսին նաև դանձանակին և ապա պնակներն չրխլել, մին միւսին յաջորդելով։ Ամենախոր լռութեան մէջ կ՚լսուի դրամներու չընկոյն որ հետզհետէ կ՚ինան դանձանակին կամ պնակներուն մէջ, երբեմն երկու քահանայ՝ մին միւսին ետևէն՝ իրենց ծանր և տուփուն հոգաթափներովն կ՚շարունակեն արշաւն։ Պահ մը աղմուկն կ՚դադրի, ալ աւելի աղմկալի երևան եղնելու համար, վերն՝ կանանց մէջ։ Շարժումն է կ՚սկսի, դիսարկներու օրօրում մ՚է երևան կ՚եղնէ, մերթ աթոռ մ՚է որ կ՚դղրդի, մերթ ոտնաձայններու չչուկ մ՚է որ կ՚վրթիւ, քահանայք կանանց կարգերուն մէջ պիտի մտնեն, բայց տեղ չկայ, պէտք է նաև քաշուիլ, տեղէ եղնել, շարժիլ, շարժելով նաև դիտողին ծիծաղն և դրաւելով ամենու ուշն, և ինչ կ՚հետևի ասկից։ Նախ՝ կ՚խանդարուի խոր լռութիւնն և ամենուն ներմեռանդութիւնն. երկրորդ՝ անլսելի կ՚ընէ կամ պատարագչին, կամ քարոզող Ս. Հօր ձայնն. երրորդ՝ առիթ կ՚տայ մեծն հաղն սկզբնաւորութեան, ուրիշի մը քթին փռնքտուքին, երկրորդի մը իր ընկերոջ խօսք մ՚ուղղելու մարմաջին, չորրորդ՝ դայթակղութիւն կ՚տայ մտայ այդ չոր ու ցամաք ձայնն, յիշեցնելով ամենու նիւթականի գերազանցութիւնն նոյն իսկ Աստուծոյ տաճարին մէջ, հինգերորդ՝ զայրոյթ կը պատճառէ ամենու սրտին մէջ այդ կոշտ ու անտանելի միօրինակ ձայնն, և ի վերջ փափաք մը՝ բոպէ մ՚առաջ եկեղեցւոյ դռնէն դուրս նետուելու։

Թերևս առարկեն մեր քահանաներն որ՝ եկեղեցին ելթէ տրձազանք ունի, իրենք ինչ յանցանք ունին, և

եթէ իրենց մանաւոր դանձանակն չդարձնեն, ուսկից պիտի ապրին։

Եթէ Ս. Յարութեանոս եկեղեցին այժմ չվնասէր, անշուշտ այդ պարագան ի նկատի պիտի առնէր չէնքին ճարտարապետն, իսկ գալով քահանայից ապրելու խնդրոյն՝ իրաւունք տալով իսկ իրենց առարկութեան, այսքանն միայն կ'ուզեցնենք, որ եթէ քահանայք մինչև այժմ կամք ու փափաք ունենային վաղուց պիտի յորդորեին իրենց մէն մի ծուխին կարողութեան չափով՝ տարեկան նպաստ մ'որոշել տալ և կանոնաւորապէս զայն դանձելով, իրենց ընտանեաց կամ պիտոյից համեմատ արդար բաշխում մ'ընել։

Աւրդ՝ կ'հարցնենք, ե՞րբ և քանի՞ անգամ այս տեսակ առաջարկ մը ներկայած են ժողովրդեան և ժողովուրդն մերժած է. քանի՞ անգամ այս տեսակ խորհուրդ մը առաջարկած են տեղւոյս Առաջնորդաց և անոնք արդելք եղած են դործադրութեան։

Բայց մեր քահանայք, թողլով բացառութիւններն մի կողմ, լաւագոյն համարած են այդ տգեղ դանձանակէն չհրաժարիլ և հարսանեկան, նշանախօսական, ծննդոց և մեռելոց ժամանակ, առթէն օգուտ քաղելով, քաղել նաև քահանեբէ դրամներ և տօնական օրեր, ներուի մեղ ըսել, մուրացիկներու նման տունէ տուն պտտիլ, ոչ թէ իբր եկեղեցական իրենց սիրելի ժողովրդեան սրտաբուխ շնորհաւորութիւնները ներկայելու, այլ դրամ դրպանելու համար։ Դադրեցուցէք սովորական նուէրն և ապահով եղիք որ մեկմէկ քահանայի երես չպիտի տեսնէ ձեր տունն, բայց կան բացառութիւններ, ինչպէս ըսինք վերն և նորէն կ'կրկնենք զոր դժբաղդաբար մատներու վրայ կարող ենք համրել։

Ենթադրելով իսկ որ Իզմիրի Հայ ժողովուրդն պիտի մերժէ տարեկան թոշակի մ'առաջարկն ի նպաստ քահանայից, և քահանայք պարտաւորին իրենց դանձանակէն չդաժնուելու և սովորական անախորժ պատճառ չտալու եկեղեցւոյն մէջ, գոնե հարկ է կարգ կանոն մը դը-

նել այն անհամեմատ իրարու յաջորդող պնակներուն, դոնէ հարկ է յարմարագոյն ժամանակներ ընտրել չրջադայութեան համար, մանաւանդ այնպիսի օրեր, երբ օտարները ալ ներկայ կ'գտնուին և զարմանօք կ'դիտեն ու կ'պախարակեն այդ սովորոյթն։

Ա.յս յոռի սովորութիւնն մեր Ս. Առաջնորդ Հօր և դատ մ'ողջախոհ և բանիբուն քահանայից նկատողութեան կ'յանձնեմք։

Խ. Ս.

ԽՍ ՅՈՒՇԱԳՐՈՑԻՑ

ՄԱՆԿԱԿԱՆ ՕՐԵՐ

Գ.

Տէրս կղզիներու հարաւակողմն՝ ամպի և անբնակ ժայռ մ'որ Տիլաս կամ Տէլէս կ'կոչուէր, մեր մաքրավայրը պիտի լինէր։ Սոյն կղզեկին ստորոտն՝ բաղրաձև խորշ մ'ուր մի քանի մանր վարքանէր հանգչեր էին՝ մէկ երկու մեծկակ առագաստաւորներու հետ, ընդունելց մեր երկայմն՝ որ միւսներուն մէջ մարտանաւի կերպարանն ունէր և որու յետնակողմն՝ խեղաց վրայ ցցուած ձողին գագաթը կ'ծածանէր դեղին լաթի կտոր մը՝ նշան անմաքրութեան։ Մեր նաւապետն՝ որ Սիրայէն մինչև Տէլէս, այս յապաղման համար զղացած զայրոյթն անասելի յիշոցներու վրիպումն թուրս թափեր էր իր խեղճ նաւապին դէմ, լուն վրայ, որոտաձայն կոչեց երբ երկաթն ընկաւ ծով. «Թող կամուրջն ելնեն ճամբորդներն։» Ես արդէն վերն էի և աչքս չորս դին հետաքրքիր կ'դիտէի և կ'մնտռէի մեր բնակելիք օթեւանն, երբ տեսայ ժայռին մի դարևանդին վրայ սպիտակ չէնք մ'ու բաւական հեռուն քարաչէն ցած սեննակ մ'որու վրայ կ'ծփար հելլենական ծայրամաշ դրօշ մը, և դրան առջև՝ պինուրի նման բան մ'որ անշուշտ պահակ մ'էր և դանդաղօրէն դետինը կ'չափէր։ Տասնի չափ անձեր դժգոյն, մրոտ և քնաս,

ելան կամուրջն և չարուեցան, երբ լուստանման նաւակ մ'որու թիակն եւեչն կ'չարժէր մեզ մօտեցաւ։ Այս լաստին վրայ կ'երևէր համազգեստով սպայ մը կանգուն՝ այնպէս վեհ դիրքով որ կարծես ծովուն պիտի հրամայէր։ Նաւապետին երկընդուց նա փայտի մը ծայրը կապած թիթեղէ աման մ'որու մէջ ընկան զանազան թղթեր, անցագրեր։ Ապա՝ նաւակ մ'առաւ բոլոր ուղեւորներն ցամաքը հանեց, հանելով նաև երթալ գալով անուուկներ, ծրարներ, վերմակներ։ Խըճալի՛ էր այս վիճակն։ Ժանտախտէ հալածուած՝ կարծես չորաբևեկ քարի մը դագաթը մեր դերեզմանը փնտռելու կ'դիմէինք։ Գառաւսուն օր պիտի տևէր ապաչխարանքն, եթէ ողջ մնայինք, եթէ դէպք մը չպատահէր մեր մէջ։ Հայրս անփոյթ, մայրս միայն ծովափն ելնելէ ետև հառաչեց։ — Վա՛յ մեզ։ այս ինչ վայրենի տեղ է։ անձրևէն փախանք և տեղատարափի բռնուեցանք։ Տէր Աստուած, քուկդ են գաւակներս . . . ։ » Եւ միշտ համբերատար ու արիասիրտ՝ մեզ առաւ իր չուրջն և աղօթք մը մրմռալով՝ ուրիշներուն հետ ճամբայ ելաւ։ Մեր ուղեցոյցն էր հսկայ, մեծափոր յոյն մ'որ իր գլխէն բարձր գաւազան մը բռնած չարունակ դեպինը կ'զարնէր և զգուշաւոր հեռաւորութիւն մը կ'պահէր, որպէս թէ, արդէն ժանտահար արարածներ, մեզմէ կ'խորշէր և մեզ մահուան կայանը կ'առաջնորդէր։ Եւ ինչ էր այդ կայանն, արդէն հեռուէն նշմարուած սպիտակ չէնքն — քառակուսի փայտէ տուն մ'որու յատակը ցցուած բազմաթիւ գերաններու վրայ նստած էր վերի յարկը, միջնորմերով անջատ մանր սենեակներու բաժնուած, ստորին յարկը զանազան արկղեր, կահեր և աւելորդ իրեր ամփոփելու, վերինն ուղեւորները։

Նիհար, ոսկրուտ կին մը, Բէբա Քաֆինկ անուն, մեր ուղեցոյցին հակապատկերն և թերևս անոր արժանի լծակիցն, որ գլխուն մի կողմն ունէր ծռած՝ դափակ ծոպաւոր գիլս մը, աւէծապիկ գիսակովը բոլորուած, ճչմարիտ օձաձուկ մը, մեզ սուլիչ ձայնով մը վեր հրաւիրեց, ցոյց տուաւ մեզ յատկացած սենեակն՝ մերկ ու լերկ, և յայտնեց որ մեզ ներելի չէ, դուրս ելնել առանց իր հրամանին։ Մայրս իսկոյն գործի սկսաւ և բոլոր այն օրն աշխատելով մեր սենեակն այնպէս սրբեց մաքրեց, այնպէս ամեն բան կարգի դրաւ, անուուկ, բազմոց անկողին, սեղան, վարագոյր չտկեց տեղաւորեց որ բաւական հանգստաւէտ վայր մը դարձուց։ Բայց միևչ ես անհամբեր էի դուրս ելնել ու տեսնել, և հայրս ուտեստի մասին կարևորն՝ իմանալ և

հոգալ, պաշտօնատար մ'եկաւ մեր դուռն և յայտնեց թէ մեր ամենօրեայ պիտոյքն պարտ էր ամեն իրկուն թղթի մը վրայ նշանակել և ցուցակն իրեն յանձնել որպէս զի մեր պարէնը ճարէ։ Երբ հայրս չատ ծանր ու անհեթեթ դատ այս պատուէրը ու բողոքեց, պաշտօնատարը դէմքը ծմռկեց· — Այս է առ այժմ կանոնը, ըսաւ, որու պարտ է հնազանդիլ եթէ չէք ուզեր անօթի մեռնիլ։ » — Այս ի՞նչ հրաման և ի՞նչ կանոն է, մրմռաց հայրս իւրովի։ Անօգ և անհաց մնալ այս նեղ խուցին մէջ, մեռնիլ ըսել է, և մաքրանոցն իրօք սպանդանոց մ'ընել է։ Ինչպէս հարստութեան նոյնպէս իշխանութեան մէջ չեռներ կան։ Այսօր մէկ վաղն երկուք, և արդէն՝ չէ թէ հսկաներու թռռներ, այլ սաորին դործակալներ բարձրագլուխ կ'խրոխտան ծովու և քարերու վրայ, մեզի պէս ողորմելիներու վրայ։ Անտանելի է այս, և պէտք է ճար մը դտնել։ Բայց չեմ հասկնար, յարեց հայրս լուսամտէն դուրս աչք մը նետելով, թէ ի՞նչպէս պիտի ճարեն մեզ ուտելիք այս կոչտ քարակոյտէն, ուր չուկայ, գրպակ մը, հիւղակ մ'անդամ չկայ, ուր թուփ մը, բոյս մը չկայ։ Ինչո՞ւ կ'արդիլեն մեզ հոս, քանի որ հոգի մը, շուք մը չեմ տեսներ։ Արդեօք մեզմով քարերն ու ծովը պիտի ճարակին, թէ ոչ մեր պահապաններու փորը պիտի պարարի։ »

Սակայն տրտունջ և բողոք անօգուտ էին։ Այսպէս չարաթմ'անցեր էր, և ամեն ուղևոր իրարմէ հեռու, մի քանի պաշտօնաւորներու բռնասէր կամաց իբր սորուկ կ'հեծէր, որոշ ցուցակներու համեմատ ամենուն հայթայթուելով աւուր պարէնն, որ ոչ նուազ համեմուտ էին իրենց բարձր դիներովը, երբ առաւօտ մը՝ մեր դրակից սենեկին մէջ տաք վէճ մը և սուր ձայներ կ'լսուին։ Բժիշկ մ'որ սովոր էր երկու օրն անդամ մը մեր քաւարանն այցելել, կուսի բռնուեր էր հնչենացի ուղևորի մը հետ, որ չատ յարդ կ'վայելէր՝ իբրև ուսումնական անձ մը։ Տաֆլա մը, ուսուցիչ մ'էր ակնոցաւոր, զոր ատչ տեսեր էի մեր ուղևորութեան ժամանակ՝ ձեռքն յուշատետր մ'որու մէջ կ'դրէր ու կ'գծէր անդադար, կ'դիտէր ծովը, կղզիներն, մինչև իսկ թռչուններ ու ձկներ որ երբեմն իր գլխուն վերև, երբեմն ջրին երեսը կ'թռչտին և կարծես թէ ամենուն վրայ հին ու նոր յիշատակներ կ'վնտռէր։ Աղմուկը հետզհետէ կ'աւելնայ, բոլոր ճամբորդները դուրս կ'թափին որ իմանան այս կուռին պատճառն։ Տաֆլաք վրդովալով կ'խօսէր մեր անիրաւ բանտարկութեան դէմ և կ'սպառնար բարձրագոյն իշխանութեան

բողոքել՝ եթէ անմիջապէս հրաման չտրուէր մեզ կղզին լրջիլ։ Ահա այն ատեն այր, կին մանուկ վխտուկ մը կ'հանեն, պատա-ղին կ'ձայնակցին և բժշկին դէմ կ'յարձակին, որ հազիւ իր օձիքը կ'աղատէ և նունչը պահականոցը կ'առնու։ Անարդիւն չմնար այս չարժումն և երկու օր ետք՝ մաքրանոցի դռները կը բացուին և թոյլ կ'տրուի ուղևորներուն աղատօրէն պտըտիլ և իրենց պիտոյքը հոգալ, միչդեռ Տատալոսը նոր պատիւ, անուն կ'ստանայ մեր մէջ և իրր հերոս կ'պաշտուի։

Եւ սակայն կ'արժէր այնքան իրար անցնիլ կղզիի մը համար որ արտաքին հրապոյր մը չունէր, և մէկ ծայրէն միւսը կէս ժա-մու մէջ կարելի էր չափել։ Մօտաւոր կղզիներէն ամեն առտու լիաբեռն նաւակներ կ'հասնէին մեր ծովածոցն և՝ միշտ զգու-շական միջոցներու թէզութեամբ, մաքրաւորներու կ'ծախէին այլ և այլ ուտելիք ոչ այնքան նուազ։ Միայն եթէ օրը մի քանի ժամուան պտոյտ կ'բաւէր սովորաբար մաքրանոցի բնակներուն, Տատալոսին համար կարծես բոլոր օրն քիչ կ'գար, այնքան քըն-նութեան և դիտողութեան նիւթեր կային հոն իրեն համար։ Երկար ժամեր կ'անցնէր դրեթէ ամեն օր կղզեկին մի սարին, դարին, ափին կամ ժայռի մը վրայ նստուկ կամ կանգնուն՝ միշտ յուշատետրն իր առջև, և կ'զմայլէր կ'հիանար կ'մնար լրջալատ տեսարանին վրայ, որ ինձ համար վիսկ գիրք մ'էր։ Թէև իր գրօսարան, կերպ մը բնական մարզարան, ախորժելի էր ինձ այդ ժայռն, ուր սահէպ կ'մագլէի, կ'ոստոստէի մի քանի խաղա-կից տղոց հետ, ուր ժամակներ կ'հաւաքէի, ծովեղերը վոսեր կը փորէի, քարեր կ'նետէի պարսատիկով հեռուն, խեչափառներ կ'որսայի աւազին մէջ բոկոտն, բայց կ'զարմանայի նաև թէ ի՞նչպէս Տատալոսն միևնակուկ կ'անցնէր իր ժամերն և ի՞նչ բանի կ'պարապէր։ Ուստի՝ օր մը երբ նա իր սովորական պտոյտը կ'ըս-կսի, անոր կ'հետևիմ ծանր ծանր և ժայռի մ'ետևին կ'կծկիմ՝ ոչ շատ հեռի իր դադրած տեղէն։ Ցանկարծ՝ ականջիս կ'հաս-նին ճայներ, իրր ողբագին մրմունջներ։ Մարդը՝ գլխարկը հա-նած, ճակատը հովին տուած, բերանը բաց ու շրթերը չարժուն՝ կ'արտասանէր բառեր մերթ այս մերթ այն կողմն դառնալով՝ մինչ ծովափին վրայ փրփրուն մանր կոհակներ կարծես կ'ճայ-նակցէին իրեն, և մերթ գրքի մը մէջ նայելով՝ որ բարձր քարի մը վրայ բացուած՝ հովէն թերթերը կ'չարժէր։ Դողս բռնեց. կարծեցի թէ մարդուն խելքին եկած է և կծիկը դնելու վրայ էի, երբ հանած չչուկէս, նա իր աչքն ինձ դարձուց և ըսաւ.

— Տղաս, մի՛ վախնար. եկուր իմ մօտ նստիր. միասին կը դառնանք տուն, դեռ կանուխ է։

Պահ մ՚անշարժ մնացի, բայց դիտելով Տօփալեանին ժպտուն երեսն, նշանացի կոչումներն, սիրտ առի և յուշիկ մօտեցայ։ Համակրելի դէմք մ՚ունէր, պատկառելի մօրուս մը և մանր խո-հուն աչքեր այդ անձն, որ վերջէն իմ դաստատուս սլիտի լինէր։

— Հիմակ գո՞հ ես, ըսաւ նա, այս բացօդեայ պտոյտներէն։ Ո՞ւր են ընկերներդ. անշուշտ կ՚խաղան և Տօփալեանէն կ՚խուսխեն։ Դու աւելի մարդու մօտ կ՚երևիս, և ստէպ կ՚տեսնեմ քեզ ըս-տուերիս պէս, որ գաղտնի կ՚գիտէ իմ խաղերս, այնպէս չէ՞։ Լաւ է, հետաքրքիր ես, դու հայու ծաղիկ մը, և քեզմէ օրինակ առնել պարտաւոր են ընկերներդ որ յոյնի գաւակ սլիտի լինին և յունական հող կ՚կոխեն։ Ախո՜ս, կ՚երևի թէ անպէտ են դեռ ու շատ խաղասէր, մեր հին պապերուն պէս, որ սակայն արուեստասէր և գեղասէր ալ էին։ Խաղն ալ իր չափն ունի, քիչ մ՚ալ խելք սորվելու է, այնպէս չէ՞ տղաս։ Խելքն ալ խաղ մ՚է, որով մարդ կ՚զբօսնու և շատ բան կ՚շահի։ Ահա իմ խաղե-րըս այս գիրքերն են, Հոմերն է, Արիստոտելն է, յարեց-խօսա-կիցս աչերը բորբոքելով, ահա այս կղզիներն են, ծովը է, եր-կինքն է, որոց մէջ շատ բաներ կ՚կարդամ և սիրտս ու հոգիս կ՚խաղան ու կ՚ուրախանան . . . ։»

Բերանս բայ մտիկ կ՚ընէի առանց բան մը հասկնալու, և չգիտէի թէ գլուխս կ՚դառնար օդին մէջ թէ ոչ կղզին կ՚ողոր-ծուէն վրայ։ Անտարակոյս Տօփալեան իմ շփոթութիւնս դի-տելով՝ ըսաւ.

— Կ՚իմանամ, իմ լեզուս մութ է քեզ համար, տղաս, բայց քիչ քիչ սլիտի հասկնաս եթէ հետս երբեմն տեսնուիս։ Ես վարժապետ եմ, իմ անունս Պելիկլէս է, խելքս տեղն է . . . հի-մակ ժամանակն ուշ է։ Դառնանք մեր բանտը և վաղը նորէն կ՚տեսնուինք։»

Եւ Պ. Պերիկլէս, ոտք ելաւ, վերջին բարև մը տուաւ արե-ւուն՝ որ հորիզոնէն վար գլորելու կ՚ուզէր արդէն նոյն-ներն մեր երեսին զարնելով։ Ասպա սկսաւ երգել ու մաքրանո-ցին ճամբան բռնեց, մինչ ես՝ առջևէն թռչելով՝ լրմէ առաջ հասայ տուն և ծնողացս ամեն բան պատմեցի։

Այսպէս օրերը կ՚անցնէին միօրինակ խաղով ու վազքով, և կղզւոյն մէջ չկար անկիւն մը, խորշ մը, ժայռ ո՛ր մեզ անծա-նօթ լինէր։ Ի զուր Պ. Պէրիկլէս՝ իր կոչման բերմամբ՝ կ՚ջանար

ընկերներս հաւաքել և մեզ դաս կարդալ: Միշտ հոլի պէս ձեռքէն խոյս տալու միջոցը դիտէինք: Սակայն օր մը գեռ առաջը նոր ելած էր, երբ մօրս ներկայանալով խնդրեց որ պէս մը տանի ժուռ գալու: — Այս տղաք ձեռքէ կ'ելլեն, ըսաւ այս կղզեակը պիտի քանդեն, քար քարի վրայ չպիտի թողուն, բոլորը ծովը նետելով: Ջկան պէս կ'լողան, օձի պէս կ'սողան, և եթէ թևեր ունենային մինչև հիմակ ո՛վ գիտէ որ երկնից տակ պիտի թռէին: Իրաւ է, տիկին, որ քուկիններդ այնքան չար չեն, բայց օրինա՛կն, օրինա՛կն . . . կ'վախնամ որ վերջը քօթ չբերեն, հիւանդ չլինին, մեր բանտարկութիւնն երկարաձգելու պատճառ չտան և մեր պահապաններուն հացին եղ չքսէն, վասն զի այս պահապաններն անօթի մարդ իկ են և մեզ խուզել կուզեն: Ուստի՝ մեր ամենուն օգտին համար, քիչ մը հսկողութիւն պիտի ընեմ այդ ստահակներուն վրայ: Թո՛ղ Մատթէոն (ես) Լուքան և Մարքոն (իմ եղբայրներս) հետս գան ատեն ատեն, և միւսներն ալ անոնց պիտի հետևին: » Մայրս իրաւունք տուաւ մարդուն և չնորհակալիք յայտնեց:

Այլ ևս կարելի չէր աղատիլ: Պ. Պերիկլէս ճարտար ուսուցիչ, ծովափին մօտ՝ գոգաւոր ժայռի մը մէջ բնական դասարան մը կազմեց, որուն նստարաններն էին չրջանակի չարուած քարեր: Այս ալ նոր բան մ'էր, խաղ մ'էր, կամ ծուղակ մ'էր որու մէջ ընկան մէկիկ մէկիկ միւս խաղակից ընկերներս, այնպէս որ գրեթէ ամեն առտու և իրկուն մի քանի ժամ Պ. Պերիկլէս կ'զբաղեցնէր մեզ չէ թէ տառով ու դրով, այլ մեր առջև պարզուած այլազան առարկաներ ցուցնելով, պարզ հարցումներ ուղղելով մեզ և քիչ չատ հասկանալի բացատրութիւններ տալով: Ես քանի՞ խոշոր ու լեցուն գլուխ ունէր Պ. Պերիկլէս, ինչպէս չուտ չուտ լեզուն կ'դառնար բերնին մէջ: Մատին վրայ գիտէր մեծ մեծ մարդերու անուններն, զոր զմայլելով կ'արտասանէր, գիտէր թէ մէն մին ի՞նչ կ'հազնէր ու կուտէր, գիտէր թէ յունական լեռներն որքան ծառ, ծովերն որքան կղզի և ծոցերն որքան նաւ ու ձուկ կ'պարունակեն: Վերջապէս ամեն ինչ գիտէր, բանէ մը զատ, այսինքն՝ երբեմն ներքին խանդով վառ, մեր գլխէն չատ բարձր խօսքեր կ'ընէր: Կ'յիշեմ որ, երբ առտու մը՝ պայծառ էր երկինն, ծովն հանդարտ և առջևնէն նշոյլներէն մանր ալիքներ աղամանդի պէս կ'պզպզային, կ'չոզային անձայն հեռուն, Պ. Պերիկլէս իր խոր ակնարկը չեչտեց հորիզոնին վրայ, սրբեց քրտնալի ճակատն՝ որու վրայ չաշ

ռաւիղ մը կ'խաղար, չոյեց մօրուքն և գոչեց գուշատ.— Աքան-չելի՛ ես, ո՛ բնութիւն, և աւելի հիանալի դո՛ւ սիրականդ իմ Ելլադա . . . բայց ո՛չ . . . ահա, տղաք, կ'տեսնէ՞ք վարն, սա սարն, սպիտակ ամպի նման, անմահ փիտիասի երկիրն է, Պարոս, որու մարմարէ կողերէն վրիժան նուրբ մատերու հնարագիտութեամբ Ապողոնի, Աստղիկի և ուրիշ շատ olիմպարնակ դից երկնային անդրիներն. ահա՛, կ'տեսնէ՞ք վերն, Դիննոս, սրբանուէր կղզի, որ այնքան մարտիրոսներ տուաւ կրօնի, ահա՛, մեր աչ կողմն չէ՞ք տեսներ Տելոս, վայրի, մարդի, ուր կ'երևին Անահտայ աւերուն տաճարն և Ապողոնի մեհեանի բեկորներն, չէ՞ք տեսներ, քիչ մ'անդին Միրան, մեր ցանկալի ուխտատեղին, ծննդավայրն Փերեսիտես իմաստասէրին, որ իր խելքով լուսաւորեց անուանի Պիւթագորասն . . . կ'տեսնէ՞ք . . . ա՜հ, սիրելի ուսուցո՛ւմ արդեօք և ես մեր նորարոյս ուղեղները, իմ զաւակներս, սիրելի բազդաւորի՛մ արդեօք . . .

Եւ Պ. Պերիկլէս այսպէս խօսելու ատեն ոչնքան կ'բորբոքէր, գլխով, ոտքով ու թևերով այնքան կ'շարժէր, իբր թէ հին ստուերներու և նոր ոգիներու հետ կ'խօսակցէր՝ բոլորովին ինքն իրմէ ելնելով, որ քիչ քիչ կ'յառաջանար դէպ ի ծով, մոռնալով մեզ, և լարծուն քարի մը վրայ ոտքը սահելով ջրերուն մէջ կը նստէր . . . :

Ծիծաղի՞լ թէ ոչ լալ պէտք էր մեր մեծ մարդուն այս անկման վրայ, չգիտեմ, միայն այս գիտեմ որ բոլոր իր աշակերտներն սուր աղաղակ մը հանելով վազեցին որ ջինք ծովէն քաշեն հանեն։ Սակայն պաղուկ ջուրն և մեր աղաղակն արդէն սթափուցեր էին Պ. Պերիկլէսի, որ կէս մը թրջած և ամօթահար, ցատկեց ցամաքն.— Փոյթ չէ՛, տղաք, կրակս շատ էր, թեթև բաղնիք մ'առի — ըսելով. մինչդեռ մենք իր բոլորն առինք և առօք փառօք դէպի մաքրանոցը սկսանք քալել՝ այդ օրուան դասն մեզ այս գաղափարն ու քիչ մը ներքին հաճոյք մը տալով թէ՝ վարժապետներն ալ կրնան դայլիլ ու վար ընկնիլ։

Մ. Մ.

ՎԱԼՍԻ ԾԱԳՈՒՄԸ

Ընդհանուր կարծիք մ'է թէ վալսը գերմանական ծագում ունի։

Սակայն այս պարը՝ ըստ Միւրժէր — «Սիրոյ արագընթաց քայլը» կ'անուանէ, բուն Ֆրանսական պար մ'է որ առաջին անգամ Բարիզի մէջ պարած են 1178 Նոյ. 9ին։

Արդէն Բրօվանսի մէջ ընդհանրացած էր վալսա անուամբ և երգն ալ քալսա կ'ըսուէր։

Բրօվանսէ Բարիզ անցաւ և սկզբուղջ ԺԲ. դարուն չատ յարգի էր և վալուաներու արքունեաց առաջին գրօսանքը եղած էր։ Վերջէն գերմանները առին այս պարը և Բրօվանսի վալսան գերմանական վալսերը եղաւ։

Նոյն դարու բանասէրներէն մին վալսա անուամբ գիրք մը հրատարակած է որուն մէջ այսպէս կ'խօսի վալսի ծագման վրայ.

«Նախնիք արուեստգ ծնած էին։ Սրամազդ աստնց հրեշային կերպերէն սոսկալով՝ երկու սեռերը զատեց։ Երբ այսպէս զատուեցան մարդ և կին սկսան հալիլ ու մաշիլ։ Աստղիկ գըթաց անոնց վիճակին և վալսան սորվեցուց որով երկու սեռերը դարձեալ կ'միանային։»

Նե այս բանահիւսական մեկնութենէն վերջը հեղինակը աշխատած է վալսողներու ձևերը և շարժումները նգարագրել։

ԺԳ. Դարու հեղինակ մ'ալ դրած է թէ վալսը առաջին անգամ 1178 Նոյ. 9ին մտած է Ֆրանսայի արքունիքը և կ'պահպարակէ Լուի Ի. որ չատ նպաստեց այս պարին տարածուելուն։

Գ. Խ.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր Խմբագիր.

«Ա. Մամուլ» օգտակար հանդիսին Մեծ. Սահակ Եպիսկոպոսի Աւետիքեան մեկ տարեկան նուիրած լինելով Ս. Կերակոս եկեղեցւոյ Արական վարժարանիս, հրապարակաւ կը փութամք մեր շնորհակալիքն յայտնել առաւելապէս նուիրատուին՝ ի դիմաց նոյն կրթական հաստատութեան։

Հոգաբարձութիւն երկսեռ վարժարանաց Ս. Կիրակոս եկեղեցւոյ

31 Յունվար, 1895

Տիարպեքիր Վ. Ատենապետ ԿԱՐԱՊԵՏ Խ. ԹԻԹԻՒՆՃԵԱՆ
Ատենադպիր ԿԱՐԱՊԵՏ ՍԹԱՓՈՂԼԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Նանսի վարժուհի պատրաստելու համար, 1895 Յունվար 1էն մինչև Փետրվար 22 հաւաքուած տարեկան և ամսական բաժանորդագրիններ։

ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՈՂՆԵՐ

Տիկին Վ. Ա. Քէօլէեան 99, Օրիորդ Ա. Գասպարեան 99։

Մեծ. Տեարք Սարգիս Թագաւորեան 198, եղբարք Ազնաւորեան 178, կարապետ Անտոնեան 178, Մինէրան Խիլիքճեան 178, Պետրոս Պաքրճեան 178, Յարութիւն Խիլիքճեան 132, Հայկ Մատաոեան 99, Մուրատ Ձիլէպեան 99, Յովհաննէս Թ. Պարճանքեան 99, Սարգիս Գուլումճեան 99, Սմբատ Պալեան 99, Տիգրան Խիլիքճեան 99, Տիգրան Պ. Պարտիզպանեան 99, Յովհաննէս Ճգնաւորեան 66։

ԱՄՍԱԿԱՆ ԿԻՍ ՄԷՃԻՑ ՎՃԱՐՈՂՆԵՐ

Մեծ. Տեարք, Թովմաս Թովմասեան 33, կարապետ Ց. Տիլսիզեան 16 1/2, Մինրան Գազտաղլեան 33, Նազարէթ Նազարէթեան 33, Վահան կարապետեան 16 1/2, Օհան Մինրզեան 33, Մարտար Մինրզ 16 1/2, Յովհաննէս Մ. Եսայեան 33, Մինրան Ղազարոսեան 33, Սուր Թոքաթլեան 16 1/2, Աւետիս Ամիրայեան 33, Յովհաննէս Ուենճեան 33, Արմենակ Էմմասեան 33, Արմենակ Պ. Պարտիզպանեան 33, Պերճ Զիվիճեան 16 1/2, Անտօն Անտօնեան 33, Սիւքեաս Սիւքեասեան 33, Գրիգոր Պայաճեան 16 1/2։

ԱՄՍԱԿԱՆ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՄԷՃԻՑ ՎՃԱՐՈՂՆԵՐ

Մեծ. Տեարք, Աբամեչիս կոսպանդեան 16 1/2, Ամճա Պօղոս Կ. Օհանեան 16 1/2, Առաքել Առաքելեան 8 1/4, Արմենակ Ազասեան 16 1/2, Արմենակ Կիւրիւնեան 24 3/4, Առաքել Շաքլեան 16 1/2, Արտաշէս Կիրիւնեան 16 1/2, Ազարեա Մատանեան 16 1/2, Գրիգոր Մովսէսեան 8 1/4, Գոռդի Պարտաքճիօղլու 16 1/2, Գէորգ Պարքճեան 16 1/2, Գասպար Զաքճեան 16 1/2, Գէորգ Քէշիշեան 16 1/2, Գրիգոր Խորասլեան 8 1/4, Գրիգոր Կ. Յակոբեան 16 1/2, Գէորգ Սպարդալեան 16 1/2, Եղբարք Նեվզհիրլեան 8 1/4, Եսքօ Մ. Քաբասուքօ 16 1/2, Երուանդ Շիշմանեան 16 1/2, Երուանդ Մանկիեան 8 1/4, Զարիֆ Ամիրայեան 33, Զգօն Սալատեանեան 33, Զարհ Սմմանեան 8 1/4, Թադեոր Ղազարոսեան 16 1/2, Թադեոր Մաղաքեան 16 1/2, Թադեոր Ուենճեան 16 1/2, Խոսրով Պարճանքեան 33, Խաչատուր Սուլթանեան 16 1/2, Կարապետ Պողոսեան 16 1/2, Կարապետ Ս. Ոսկանեան 8 1/4, Կարապետ Սիվրիսարեան 8 1/4, Հայկ Զանիկեան 16 1/2, Հայկ Մելքոնեան 16 1/2, Հայկ Լ. Պալեօզեան 16 1/2, Հայկ Ազազարեան 16 1/2, Մինրան Միքայելեան 16 1/2, Մեսրոպ Ղ. Փանոսեան 16 1/2, Մկրտիչ Պալասպանեան 33, Մելքոն Շերինեան 16 1/2, Մկրտիչ Եսայեան 16 1/2, Յովհաննէս Գալուստեան 16 1/2, Յովհաննէս Փափազեան 16 1/2, Յովհաննէս Նիքլիեան 16 1/2, Յովհաննէս Գապաճեան 16 1/2, Յովհաննէս Օտապաշեան 16 1/2 Յակոբ կարապետեան 16 1/2, Յովսէփ Դարբինեան 16 1/2, Յովհաննէս Սմմանեան 8 1/4, Յովհաննէս Նալբանեան 16 1/2, Յակոբ Փափազեան 16 1/2,

Յովհաննէս Գ. փափազեան 16 1/2, Յակոբ Մ. փափազեան 16 1/2, Յակոբ Կ. Յակոբեան 16 1/2, Յարութիւն Քէքլիկեան 16 1/2, Յարութիւն Գազանապլեան 33, Նիկողոս Ադթարեան 16 1/2, Ոսկան Ոսկանեան 16 1/2, Ոմն 66, Պօղոս Ա. Մելիքեան 16 1/2, Պաղտասար Կ. Յակոբեան 16 1/2, Պողոս Աբրահամեան 8 1/4, Պետրոս Յովսէփեան 16 1/2, Սարգիս Աւագեան 16 1/2, Սարգիս Պըտիմեան 16 1/2, Սիմոն Յակոբեան 16 1/2, Ստեփան Սիմոնեանքեան 8 1/4, Սմբատ Տամկաճեան 16 1/2, Ստեփան Պարոնեան 16 1/2, Ստեփան Ռեշինճեան 16 1/2, Սահակ Սահակեան 16 1/2, Վարդան Թ. Պարճանքեան 16 1/2, Վահէ Մամուրեան 16 1/2, Տիգրան Նիւբիւնեան 8 1/4, Տիգրան Նիքոլեան 8 1/4, Տիգրան Տէտեեան 16 1/2, Օհանճան Գալոտեան 8 1/4, Ֆելիպ Շահումեան 8 1/4, Ֆելիչէ Մելքոնի 16 1/2։

ԱՄՍԱԿԱՆ 5 1/4 ԴԱՀԵԿԱՆ ՎՃԱՐՈՂՆԵՐ

Մեծ. Տեարք, Աւետիս Գասապեան 10 1/2, Աւետիս Պապաեան 10 1/2, Գաբրիէլ Ն. Արքաճեան 10 1/2, Գաբրիէլ Ֆինճանճեան 10 1/2, Գրիգոր Յարեթեան 10 1/2, Մինհրան Պօղոսեան 5 1/4, Յովհաննէս Կարմիրեան 10 1/2, Հայրապետ Աւաքելեան 10 1/2, Սիրաք Պօղոսեան 10 1/2, Սիմոն Սիմոնեան 10 1/2։ Ընդհանուր գումար դահեկան 3897. 25

Բաղաքիս Հայ Հասարակութենէ կամ գաւառներէ ոյն Ձեռնարկին մասնակցիլ փափաքողները կարող են իրենց բաժանորդագինը կամ նուէրը ուղարկել Աբէ-Եղեան Մ-ոյ Հրատարակութեան։

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԹԱՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

1895 — *Թ. ՏՂԻ*

Կը հրատարակուի առաջիկայ տարին նոյն ծաւալով՝ աւելի ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ։

"ԱՄՍՕՐԵԱՅ ՀԱՆԴԷՍԻ" տարեկան բաժանորդագինն է 10 ֆրանք — 4 ր. ք. դրամ։ — Կէս տարուանը՝ 6 ֆր. — 2·50 ր.։

"ՀԱՆԴԷՍԻՆ" բաժանորդ գրուիլ ցանկացողները դիմելու են կամ գործակալաց եւ կամ ուղղակի Հրատարակութեան հետեւեալ հասցէով.

A la Rédaction de la Revue « HANTESS » Au Couvent des RR. PP. Méchitharistes à

VIENNE (Autriche) VII/2 Méchitharistengasse 4.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՍՄՈՒՐԵԱՆ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ ՄԱՄՈՒԲԵԱՆ

	Դահեկան	արժէք
Զաւիկ (վէպ մէր)	5	
Ձիլտին (պատառաժ)		
Միքրօ-Մեղաս, ժան և Բօլէն, Ձերմակ ու Սև (վէպ մէր)	4	
վէրմէր (կէօմէտ)	8	
Մենաստանի ազօրին (Տ. Պոմոն)	5	
Ցեվիլի սափրիչը (Պոմարշէ)	5	
Փազանիք Բարիզի (Լօժէն Ուիւ) 8 հատոր	96	50
Հազար ու մէկ դիէրներ 6 »	74	50
Երեք Հրացանակիրք (Ա. Տիւմա) 3 »	56	
Քաան տարի ետք » » 4 »	46	50
Պրաժլոն պերկոմս » » 12 »	115	
Ամօրի » »	16	50
Իվանօէ (վ. Աքօթ) 3 հատոր	29	
Անիծեալն (*** Աբբօյ) 4 հատոր	58	25
Ամուրիի մը երազները (Ի. Մարլէյ)	6	50
Աչխարհի չրջանն ուխտաւոր օրուան մէջ (Ժ. վէրն) (պատ.)		
Խորհրդաւոր կղզի (Ժ. վէրն) 3 հատոր	28	
Մանկտիք (Շանֆլէօրի)	9	25
Ինկերմանի մը Յիշատակը	8	
Համառօտ պատմ. Բնական դիտութեան (Ա. Պրէյմ)	10	
Մանր վէպեր ու պատեր ազգ համար (պատառաժ)		
Բանալի հայերէն չարտաբերութեան Ե. տետր	3	
Դիտելիք ու պարտիք ազգ Ե. տետր	5	
Ընդհանուր պատմութիւն համառօտ Մաս Ա.	5	
» » » » Բ.		
» » » Հատոր Բ.		
Առաջին Ընթերցարան	2	
Երկրորդ ընթերցարան Ե. տետր	2	50
Տունէն դուրս Թատերախաղ	5	
Իրաւանութիւն Բ. տետր	5	
Աստղաբանութիւն ազջկանց համար	5	
Արեւելեան Մամուլ 24 տարուան (1871–1894)	1500	
Նարտաի Երգը (Օնէ)	5	
Ներուպակ (Խոտէն)	5	
Առանին Տնտեսութիւն	8	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՄԱՄՈՒԼԵԱՆ

Թղմիրի համար	տարեկան	31/2	ոսկ. ղեֆի
» » Վեցամսեայ		2	» »
Ազգ. վարժապետներու	»	21/2	» »
Կ. Պոլսոյ եւ Փորր Ասիոյ	»	4	» »
» » »		21/2	» »
Ազգ. վարժապետներու	»	3	» »
Ռուսաստանի համար	»	8	րուպլի ընդ.
» » »		4	» »
Եւրոպայի »	»	17	ֆրանք
» » »		9	»

ՀԱՏԸ 31/4 ԴՐՈՒՇ ԱՐԾԱԹ

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Ո և է նամակ, յօդուած ու գրուած ուղղեալ խմբագրութեանս կամ չեն դարձուիր։

Ա. Մամուլ կ'հրատարակէ նաև ձանուցումներ չափաւոր պայմաններով։

Թէև Ա. Մամուլ *ունի իր գործակալներն ի կ. Պոլիս*

Մեծ. ՆՇԱՆ Էֆ. ՊԷՐՊԻՐԵԱՆ *ՅԻ Էսկի Զապթիյէ նահանգ*

և

Մեծ. ՅԱԿՈԲ Էֆ. ՀԱՆՆԷՍԵԱՆ *Հէլպիկ խան — կալաթա*

որոց միջոցաւ կարելի է բաժանորդ գրուիլ և թերթերն ստանալ, սակայն այն բաժանորդներն որ կ'փափաքին ուղղակի ընդունիլ իրենց թերթերն կարող են դիմել խմբագրութեանս իրենց հասցէն որոշակի նշանակելով և բաժանորդագնային գումարն ուղարկելով

Հասցէ

Մ. Մամուրեան
Խմբ. Տնօրէն Ա. Մամուլ ի ՋՄԻՒՌՆԻԱ
M. Mamourian
Rédacteur de la Revue
« Arévélian Mamoul » SMYRNE

Անոնք որ կ'փափաքին իրենց երկերն թերթիս մէջ ծանուցուած տեսնել, կ'խնդրուի որ երեսկան օրինակ խմբագրութեանս հասցնեն։